Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

281.6
G-63

1861

Printed in Turkey

5

281.6
Ն-63
Printed in Turkey

# ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

## Ս. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

ԸՆԴ

## ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՅՈՒՆԱՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՐՈՅԵՆՑ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

1861

~~11055~~

315-V2

634
40

Printed in Turkey

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԷՍԻ

Արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ. յորժամ չոքաւ դեսպանութեամբ 'ի Թագաւորէն Հայոց Լեւոնէ 'ի Կոստանդնուպօլիս : Հարցուած պատրիարքին եւ պատասխանի սրբոյն

ՆԵՐՍԷՍԻ

Երբեւ յառաջեաց սուրբն Ներսէս առաջի Թագաւորին Յունաց՝ եւ ետ ողջոյն, մատուցին զպատուէրս եւ զհրամանս եւ զԹուղթս տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսին, եւ զԹագաւորին Հայոց Լեւոնի. եւ նա մեծաւ ուրախութեամբ եւ պատուով ընկալաւ զսուրբն Ներսէս. եւ մեծարեաց մեծաւ պատուով:
Երբև յառաջեցին 'ի սուրբ

եկեղեցին և արարին ատեան՝ Թագաւորն և պատրիարքն և այլ ամենայն գլխաւորքն յունաց ազգին, Եւ ասէ Թագաւորն ցսուրբն Ներսէս, եթէ մարդս յերկուց է, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. և նախամեծար հոգին է քան զմարմինն։ Արդ վասն քո գրեալ է կաթուղիկոսն և Թագաւորըն. Թէ իմաստութեամբդ կատարեալ ես. և զոր ինչ 'ի մեր մէջն կայ՝ դու լընուս։ Եւ յետ պատարագին հանդարտեցաւ Թագաւորն և պատրիարքն։

Խօսեցաւ Թագաւորն ընդ սուրբն Ներսէս եւ ասէ. Թէ վկայեալ է կաթուղիկոսն որ սուրբ և ճշմարիտ մարդ ես։ Եւ պատասխանի և ասէ, զճշմարիտ վկայութիւնդ տուեալ տէրն իմ, որպէս զԱս-

տուծոյ սուրբ եւ ընտրեալ հայրապետ· իսկ ես նուաստ եմ յամենայնէ 'ի հայոց , և կամ առաջի ձեր· և զոր ինչ հարցանէք` տամ` պատասխանի, և թէ 'ի մէնջ թերութիւն կենայ` նա' մեր սուրբ եկեղեցի կատարեալ է 'ի փառըս Աստուծոյ և 'ի հաւատս և 'ի գործս :

Ասէ պատրիարքն, թէ վաղըն Քրիստոսի աստուածութեանն և մարդկութեանն խօսիմք ինչ :

Պատասխանի ետ սուրբն Ներսէս և ասէ· եթէ հաւատոյ բան յաւետարանչացն և յառաքելոցն և 'ի վարդապետացն ուսեալ եմք և անթերի ունիմք և գիտեմք· զտէր մեր Յիսուս Քրիստոս աստուածեղէն և մարդկեղէն բնութեամբ յատկութիւնն և մի-

անձնաւորութիւնն. և այսմ համաձայն դաւանք զնամակս Էմմանուէլի թագաւորի և զոր առ Նորօք քահանայապետին. և չունիմք վասն այսր ինչ հակառակութիւն. զի թէ երանելին Կիւրեղ կարօտացաւ ընդդէմ բաժանողին Նեստորի ասել մի բնութիւն բանին մարմնացելոյ, սակայն ՚ի նախ քան զնա հարցն յառկանայ իմանալ զբանին բնութիւն ՚ի Քրիստոս. որ Աստուածն է և մարդ. և մի որդի Աստուծոյ ՚ի սուրբ կուսէն։

Երկրպագեաց պատրիարքն։ և հաճեցան ամենայն ժողովքն. և գոհութիւնս ետուն Աստուծոյ. աճեաց զբանն ես ընդարձակագոյն ՚ի նմանէ վասն ներմարդութեանն. և զամենեսեան զուարճացոյց։

Այսէ պատրիարքն, եթէ վա-

պըն ջրին որ 'ի սուրբ խոր-
հուրդըն՝ վկայէ սուրբն Յա-
կոբ յիւր պատարագն , որ ա-
ռաջին եպիսկոպոսն էր յԵրու-
սաղէմ · և Գրիգոր Նիւսացին
և Բարսեղ զայս ինչ և զայն ։
Այսէ սուրբն Ներսէս · եթէ
Թագաւորս՝ զոր բերանովն իւ-
րով օրինադրէ՝ 'ի յարքունի իշ-
խանացըս չեմք կարօտ զայն
ուսանել · այսպէ՞ս է ։ Վկայե-
ցին թէ այո՛ ։ Այսպէս վկայ-
եաց Քրիստոս յետ խորհրդոյն ·
ո՛չ ես արբից 'ի բերոյ որթոյ ·
և ոսկեբերանն մեկնէ՝ թէ
որթն գինի և ո՛չ ջուր բերէ ·
և զմիւս հերձուածըն արտաքս
խլէ, որ 'ի սուրբ խորհուրդն
ջուր 'ի կիր արկանեն ։ Արդ
մեք ըստ Քրիստոսի հրամանին
'ի բերոյ որթոյն նուիրեմք
զբաժակն · և ունիմք վկայ
զայս՝ ո՛վ պետ · և չեմք կա-

րօտ այլ վէպի, յորժամ ՚ի Տեառնէ ունիմք զաւանդութիւն։ Այլ սուրբ Յակոբայ պատարագ ո՛չ գիտեմք, զի Եւսեբի չյիշատակէ. և նա թէ յեկեղեցի պատարագ ունէր զկնի իւր, թէ թերւոյն էր եղեալ. և այս ե՞րբ է. յայնմ՛ թէ առաքեալքն պատարագի բան չխօսեցան. զի եթէ զնոցայն ունէաք՝ այժմ զի՞ ա՞րդ կարօտիմք. և չգտաւ այսմ պատասխանի ։

Ասէ պատրիարքն. եթէ Ոսկեբերան վասն նոցայն ասաց. որք ջրով միայն պատարագէին, և զգինին պիղծ ասէին ։

Ասէ սուրբն Ներսէս. ո՛չ է այդպէս. զի սուրբ խորհուրդըն գինին է և հացն ։

Ասէ պատրիարքն. զԲարսղի պատարագն ունիմք ։

Ասէ սուրբն Ներսէս. այո՛, եբեր և զգիրն ՚ի մէջ ։

Այլ պատրիարքն · գի՛տ զայն տեղին յորում գրեալ է · թէ նոյնպէս և զբաժակն օրհնեաց և խառնեաց և ասէ . առէ՛ք արբէ՛ք ։

Այլ սուրբն Ներսէս · եթէ ասա խառնեաց ո՛չ գոյ · այլ միայն թէ օրհնեաց

Այլ պատրիարքն · խոտելի՛ է· այլ այսպէս է բանն թէ օրհ-նեաց · խառնեաց ։

Այլ սուրբն Ներսէս · եթէ Բարսեղ յաւետարանէն է առ-եալ · անդ ե՞ւր է գրեալ թէ խառնեաց · այլ եթէ Բարսեղ կամ դուք յաւետարանի բա-նըն յաւելիք՝ մեզ չէ՛ ըն-դունելի ։

Եւ ամենեքեան գովեցին զճշմարիտ պատասխանին · և աճ-եաց արտունջն · և անհարկու-թիւն առնուլին վասն պատրի-արքին տկարութեանն ։

Ասէ սուրբն Ներսէս. գրեալ է Յոհաննու 'ի Յաւետարանին մեկնութեան. երկու աղբիւր բղխեաց 'ի խաչին. մին 'ի մկրտութեանն, և միւսն 'ի խորհրդոյն պատկեր, Եւ Աստուածաբանն ասէ. արիւն և ջուր ել 'ի կողիցն. մին որպէս մարդոյ. և միւսն առաւել քան զմարդոյ. և ո՛չ 'ի խորհրդոյն պատկեր առնու զայս։ Երկրպագեցին. Թէ և մեք այս պէս ունիմք. և դադարեաց այս հարցումն։

Ասէ պատրիարքն, խօսիմք վասն երեք սրբասացութեանն. զի այս սերոբէիցն ե՛րգ է Երրորդութեանն. ընդէ՞ր ասեմք 'ի վերայ Որդւոյ. երբեմն խաչեալ, երբեմն յարուցեալ, երբեմն համբարձեալ։

Ասէ սուրբն Ներսէս. Թէ ասացեալ եմք. և ասեմք և 'ի սոյն

մեռանիմք, պարծեալ 'ի խաչն
Քրիստոսի ըստ Պաւղոսի ։
Ասէ պատրիարքն · դառն
մեղք և հերձուած է ։
Ասէ սուրբն Ներսէս · Թէ և
մեք 'ի ձէնջ եմք զայն ուսեալ ։
է՞ այո՛ Թէ ո՛չ ։
Ասէ պատրիարքն · այո՛ ասէ֊
աք · բայց յորժամ տկարացան
ոմանք 'ի բանդ՝ Թողաք զխա֊
չեցալն որպէս 'ի դէմս Քրիս֊
տոսի փոխեցաք զքրիստոսածին,
և ասացաք աստուածածին ·
այսպէս և երեք սուրբն Երրոր֊
դութեան է, և խաչին ասա յի֊
շատակ գայթակղութեան ։
Ասէ սուրբն Ներսէս · անդ
երկնչիք՝ ուր ո՛չ իցէ երկիւղ ։
արդ եթէ Թողիք զխաչեցար
անելն, Թողէ՛ք և զաստուածա֊
ծին անելն · զի ծնեալն 'ի կու֊
սէն էր՝ որ բևեռեցաւ 'ի խա֊
չին · զի Թէ Աստուած էր ծըն֊

եալն ինմանէ՛ Աստուած էր և խաչեալն. և թէ մարդ էր, այս և խաչեալն մարդ էր. եթէ թողիք զ խաչեցայն՝ թողէ՛ք և զաստուածածինն. և ասացէ՛ք քրիստոսածին. Քրիստոս՛ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ. զի նոյն բանս և Հօր ասացաւ 'ի մարգարէէն. և Որդւոյ՝ յաւետարանչէն. և սուրբ Հոգւոյն 'ի Պաւղոսէ։ Այս և ըստ սորին Աթանասի նոյն Երրորդութեանն և իւրաքանչիւր անձնաւորութեանցն. և մեք աստ զԱստուած յիշեմք վասն մարդանալոյ բանին. և հզօր վասն տկարանալոյն չարչարանօք, և զանմահն սակս խաչեցելոյն վասն մեր, յաղագս որոյ և զողորմութիւնն հայցեմք միջնորդութեամբ մօր նորին Մարիամու աստուածածնին ։

Ասէ պատրիարքն․ թէ և զմեռոնն ընդ է՞ր ո՛չ առնէք ՚ի պտղոյ ծառոց ։

Ասէ սուրբն Ներսէս, թէ մեռոնին նիւթն ըստ պատահման է լեալ և ո՛չ ըստ կամաց․ զի մեք չունիմք գրով թէ թողէ՛ք զձէթն որ ՚ի ծառոց՝ և արարէ՛ք ՚ի սերմանց․ և յայսմ չունիմք ինչ հակառակութիւն․ բայց միայն զի անգի՛ւտ է յաշխարհըն հայոց, նա՛ և ՚ի հոգւոյն է զօրութիւնն և ո՛չ ՚ի նիւթոյն ։

Ասէ պատրիարքն․ թէ զտօն ծննդեանն Քրիստոսի ընդ է՞ր ո՛չ ՚ի դեկտեմբերի ԻԵ կատարէք․ զի Նիւսացին վկայէ ՚ի Ստեփաննոսի ճառն, և Պրոկղ ։

Ցաւել սուրբն Ներսէս զԳրիգոր աստուածաբանին․

փոքր ինչ տեսցես սրբեալ ըզ Յիսուս, և զծննդեանն վայելչական տօնեցաք։ Իսկ այժմ գործք ա՛յլ Քրիստոսի, և այլ խորհուրդ։ Եւ հարցս բանքն այսպէս են. բայց հարցանեմ. լեա՞լ է ժամանակ որ դուք զծնունդն և զ մկրտութիւնն 'ի մի օր ընդ մեզ էք տօնեալ ։

Ասէ պատրիարքն. ո՛չ բընաւ ։

Իսկ որ շուրջն կային՝ ընդդէմ դարձան նմա ։

Ասէ սուրբն Ներսէս. և թէ բերեմ 'ի քաղաքէս գիրք հոռոմգրով. որ մինչև յՈսկեբերան և յԱրկադէոս թագաւորն ընդ մեզ էք տօնեալ, և յայնժամ փոխեցիք վասն զանազան պատճառի. ոմանք վասն Երուսաղէմի ասացին, և այլք վասն դարձի արև-

գաւկան ։ Եւ առ մեզ միաց անփոխ . զի մեք ճշմարիտ ունիմք զլրումն Զաքարիայի պաշտաման աւուրցն . եւ ապա զյղութիւն վկայութեամբ աւետարանչին . եւ դուք յաւետեացն Զաքարիայ սկսանիք թուել , և ըզլրումն աւուրցն անտես առնէք , և լատինքն ընդ մեզ տօնեն . և մոգուցն զալըստեան կոչեն նա և ընդ ձեզ . և չկայ ինչ թերութիւն յայսմ համաձայնութիւն սիրոյն յղութիւն ։

Վկայեցին թէ ուղիղ ասացեր ։ Յիշեցին և զխընդորըն ։

Ասէ սուրբն Ներսէս , թէ չունիմք վասն այդ ինչ բան. Հռոմայ եկեղեցւոյն է սովորութիւն ; և մեք նոցին համաձայնիմք ։

Ասէ պատրիարքն, եթէ նոցայն բռնութեամբ է. ապա թէ ոչ չէկեր զգառն և ըզ-բաղարջն որպէս ասէ Յով-հաննէս թէ էր ուրբաթ զատ-կին, և ո՛չ մտին յապարանն՝ զի մի՛ պղծեսցին. այլ զի կե-րիցեն զզատիկն ։

Ասէ սուրբն Ներսէս. եթէ Յովհաննէս զութ օր բաղար-ջակերացն կոչէ. յորում խոստո-րէին ՚ի հեթանոսացն. այլ զի եկեր Քրիստոս ըստ աւետա-րանչացն, թէ պատրաստեցին զ·պասեքն. և մեկնէ Ոսկեբե-րան, եթէ յերեկորեայ թուէ-ին եւ զ զառն զենուլին, եւ կատարեաց Քրիստոս զհինն, եւ սկիզբն արար նորոյս ։

Ասէ կոստանդին եղբայր Թագաւորին եթէ զերկու պա-տարագն ո՛րպէս կատարէր ՚ի մի օր ։

Պատասխանի ետ սուրբն Ներսէս , եթէ զճշմարտութիւն 'ի վերայ օրինակին ելից , երեքեան աւետարանիչքն վըկայեն . և մի է Յովհաննէս .

Ասէ պատրիարքն . զո՞յ և այլ վկայութիւն չկատարելոյ զզատիկն : Յորժամ էառ Յուդայ զպատառն և ել , կարծեցին աշակերտքն՝ թէ Քրիստոս հրամայեաց , գնեա՛ որ ինչ պիտոյ է մեզ 'ի տօնիս :

Ասէ սուրբն Ներսէս , ահա՛ ճշմարտես զբանս , զի չասաց 'ի տօնին , այլ 'ի տօնիս , 'ի պէտս բազմականին առնուլ ինչ 'ի կրպակացն կարծեցին :

Ասէ պատրիարքն , թէ հաց ասէ և ո՛չ բաղարջ , և հաց խմորուն կոչի :

Պատասխանի ետ սուրբն Ներսէս , եթէ 'ի նոյն աւետարանի բաղարջն կոչի հաց ,

Ասէ սուրբն Ներսէս , ո՞չ յասելն Քրիստոսի , զի՞արդ եմուտ Դաւիթ 'ի տունն Աստուծոյ և զ հացն զառաջաւորութեան եկեր ։

Ասէ պատրիարքն թէ այն խմորուն էր ։

Ասէ սուրբն Ներսէս · ո՛չ բնաւ եմուտ 'ի սրբութիւն խորանին խմորեալ , և խմորեալ ո՛չ կոչի հաց , այլ ապականութիւն և անկենդան · որպէս ասէ Գրիգոր աստուածաբանն 'ի պասէքին բանին · և 'ի հինմէն և 'ի քացախուտ չարութենէն , զի խմորեալն ո՛չ կոչի հաց կենդանական ։

Ասէ լօղօթէդն , թէ զգործք առաքելոցն կարդացեա՞լ ես , զի գրեալ է 'ի կղէմին , եթէ հաց մատուցին Պետրոսի , և նա օրհնեաց և եբեկ ։

Ասէ սուրբն Ներսէս , այո՛ 'ի բերան ունիմ , բայց ահա՛ որ

դու չես կարդացեալ զգործքն ։ Չի գրեալ է այսպէս վկայուԹիւն մի և երես , Թէ բեկանէին զհացն , և հաղորդ լինէին բեկանելոյ հացին ։ Եւ Պօղոս ․ մինչ Տիքիկոս անկաւ 'ի պատուհանէն և բարձաւ մեռեալ , եբեկ զհացն 'ի տունն ․ ուր լապտերքն էին , և էջ յարոյց զմեռեալն ։

Ասէ լօղօԹէտն , Թէ և այն բաղա՞րջ էր ։

Պատասխանի ետ սուրբն Ներսէս , եԹէ վասն առաքելոցն չունիմք ճշգրտեալ 'ի բաղարջ և 'ի խմոյն , զի նոքա չունէին զայս փոյԹ , զի հոգւովն սրբէին․ այլ Քրիստոսին ամենայն իրօք բաղարջ հաց պատահեաց , ըստ խոնարհուԹեան իւր , նա՛ և կուսածին և անախտական մարմնոյն 'ի դէպ է բաղարջն և ո՛չ խմմորեալն լինել օրինակ ։

Ասէ թագաւորն , ապա դուք Քրիստոսի աշակերտք էք , և մեք առաքելոցն ։

Ասէ սուրբն Ներսէս , որպէս լսես ։ Եւ հաճոյ թուեցաւ ամենեցուն պատասխանին ։

Ասէ պատրիարքն , թէ զայս կամիմք ուսանիլ , թէ յի՞նչ իրս գտանիք մեզ հետեւողք ։

Պատասխանի ետ սուրբն Ներսէս ,՚ի հաւատոյ բանըն ձայնակից գտանիմք մեք եւ դուք սուրբ հարցն և առաքելոցն , ապա ՚ի կարգ եկեղեցւոյ լուայք զպատասխանիսն ։ Իսկ եթէ կամիք լսել , զի ՚ի ձեռն եմք և եղիցուք ։

Ասէ պատրիարքն , բայց զքէն գրեալ է կաթուղիկոսն որ դու ընուս զթերին ։

Պատասխանի ետ սուրբն Ներսէս . եթէ այսպէս ընուիմ , և ո՛չ անբան հաւանութեամբ ։ Ապա

եթէ խնդրէք հաւանութիւն՝ ծանուցանեմք կաթուղիկոսին և Թագաւորին , և մեք օժանդակ լինիմք խաղաղութեան ։

Ասէ Թագաւորն և 'ի քէն ոչի՞նչ լուծանի ։

Ասէ սուրբն Ներսէս , ո՛չ բընաւ , բայց միայն զի զհաւատոյ զբանն հրատարակեմք և ընդունիմք զձեզ ձեր կարգովդ , եթէ և դուք զմեզ ։

Ասէ պատրիարքն , ես առնեմ զմեր խնդիրքս , և գաս յեկեղեցին , և խօսակցիմք առանձինն ։

Պատասխանի ետ սուրբն Ներսէս , 'ի կամս ձերեմ Թագաւորիդ հրամանաւ ։

Ասէ Թագաւորն , և ես կամիմ որ գնաս ։

Եւ անց 'ի վերայ աւուրք ինչ մինչեւ և 'ի հոգոյն գալուստըն , գնաց պատրիարքն և Թագաւորն խուռն ժողովով և եպիս-

կոպոսօք հանդերձ ։ կոչեցին և զսուրբն Ներսէս , և կրկին եղեւ նոյն բանից խօսակցութիւն։ և ևս առաւել զօրացաւ սուրբըն 'ի պատասխանիսն ։ Եւ հաճութեամբ ընկալաւ ամենայն ժողովն , և ևս համարձակեցան 'ի պատրիարքին բանիցն այպանումն ։ Եւ յորժամ ել պատրիարքն , եկն ումն իմաստասէր կրօնաւոր առ սուրբն Ներսէս ։

Եւ ասէ , թէ առանձինն առեր գովութիւն 'ի մետրապօլտացն և 'ի կղերիկոսացն և յիշխանացն եւ առ հասարակ յամենայն ժողովրդոյն , զի որ 'ի մարտ ելեալն է՝ թէ՛ և ինքն դիտէ զիւր ռըմբին թափալն , բայց հայեցողքն առաւել ևս տեսանեն ։ Այսպէս և մեք զքո յաղթութիւնդ հակառակամարտին ։

Նոյնպէս և իշխանքն գա-
յին և ասէին զարմացմամբ ,
Թէ մին մարդ զայսքան մեծ
ժողովս յոտին կացոյց , և ՚ի
հարցանելն , և ՚ի սրբոյն
Ներսէսի պատասխանելն ամե-
նեքեան ափ ՚ի բերան ե-
ղեն , և շնորհիւն Աստու-
ծոյ հայոց եկեղեցւոյն եղ-
ջիւրն բարձրացաւ , և զոր հո-
ռոմ դատէին գտաւ անապակ
հայ , և ճշմարտութեանց
վարդապետ , և եգիտ զնոսա
անօսրացեալ ՚ի գիտութենէ
և թանձրացեալ ՚ի հեշտու-
թիւն մարմնոյ .

Ասէ լօղօթէդն , Թէ Դ-
խաչ օրհնէք , և գաւին ար-
եամբ մկրտէք , և միոյն Հայր
դնէք և միոյն Որդի և միւսոյն
սուրբ Հոգի .

Ասէ սուրբն Ներսէս , եթէ
այդպէս էք արարեալ , որ նմանիք

քննութեամբ զաշխարհս յայս աթոռոյս պատառեալ էք և ո֊րոշեալ ։

Եւ գտեալ սուրբն յաղթող ամենայն յունաց շնորհօք Յի֊սուսի Քրիստոսի Աստուծոյ մե֊րոյ , որում փառք յաւիտեանս ամէն ։

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

## ՏԷԱՌՆՈՒՍՈՅՑ ԱՂՕԹԻՑՆ

ԱՐԱՐԵԱԼ

Տ. ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ
ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԱՐՍՈՆԻ
ԿԻԼԻԿԵՑՒՈՅ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1861

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

**Տեառնադասայ աղօթիցն. Արարեալ տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ, Եպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոյ։ Արարեալ՚ի բանն որ ասէ. Հայր մեր որ յերկինս՚՚։**

Որ հայր դաւանէ՝ զինքն ՚ի ներքոյ որդիութեան սահմանի գրաւէ։ ի սոցա մէջն ոխ թշնամութեան ո՛չ արմատանայ. այլ թէ լինի ստահակութեամբ որդւոյն, հայրն բնական գթովն և իմաստութեամբն ներէ. և ներողութեամբն ընդ իւրեաւ միշտ նահանջեալ պահէ։ Այսմ հայրենի կամացս ընդ արձակութեան ծանօթ է որդին. վասնայսորիկ ո՛չ զսիրոյն կապ ընդ ստամբակելոյն յուսահա-

տութեամբն խաղէ · այլ զի՞նչ · որպէս զմանուկ մեղանչէ , և դարձեալ դէմ եդեալ զհայրն անուն դաւանէ · և նա ներողութեամբն ՚ի ներքոյ թևոցն ընդգրկեալ պարուրէ ։ Իսկ ՚ի վերայ ծառայի ո՛չ պահէ զայս սահման սովորութեան · քանզի ո՛չ ունելով տեառն և ծառայի զբնական գթոյն շաղկապ , խիանգամ մեղանչելն՝ սա՛ զարհուրի, և նա պատուհասէ ։

Բայց եկե՛ղեցիս Քրիստոսի՝ Աստուծոյ Հօր ո՛չ է իկարգ ծառայութեան. այլ յորդեգրութեան · զի Հայրն իմ (ասէ)· և Հայր ձեր ։ Ուստի և ո՛չ ընդ ապստամբելն մեղօք՝ զարհուրի , այլ զբնական գութն յիշելով , աներկիւղ պատկառանօք առ Հայրն դիմեալ ասէ , Հայր մեր որ յերկինս ես , Այսինքն · զի թէ պէտ փառօք և զօ-

րութեամբդ լի են երկինք և եր-
կիր, սակայն ի քննութիւն ան-
հաս էութեանդ 'ի սեպհական
քո աթոռ իյերկինս բազմիս:
Այդանօր լո՛ւր զիմս հառաչա-
նօք 'ի յերկինս: Ուր և մարմնակից
մեր քո Որդիդ եմուտ վասն մեր
քահանայ և բարեխօս: Լո՛ւր
զորդւոյդ վասն իմ, և զիմս վասն
գործս առաջնորդ լինելոյն առ
քեզ ջանխեալ խօսակցիմ: Եւ
զի՞նչ է խնդիրս զոր հայցես
յամենաբաւական կամացն
Աստուծոյ զոր եւ Հայր
դաւանեցեր ո՛վ մարդ,
յա՛յտ արա: Եթէ զսոսկալիդ
հրեշտակաց ընտանի անուամբ
'ի վերայ քո արժանի դատար ան-
ուանել, յայդ խնդիրսդ մի՛
լինիր կեղակարծ. այլ ափուեա՛
առաջի նորա համարձակապէս:
Սուրբ եղիցի անուն քո.
Ասա ո՛չ միայն դասիւ է ա-

ռաջին 'ի խնդրուածս, այլ և
զօրութեամբ: Այսինքն զի
կարգ ընթացից ունին ամե-
նայն բանք աղօթիցս, որպէս
և հանդերձեալ եմք ուսանել:
Քանզի աղբիւրն բարեկար-
գութեան զիա՞րդ աստ յիւրն
սովորութենէ վրիպէր: Ուստի
և նախ առաջին՝ զայս խըն-
դրել 'ի Հօրէ ուսոյց: Սուրբ
եղիցի անուն քո: Եւ լու-
ծումն բանիս և պիտութիւն
խորհրդոյս ո՛չ կարեմք ածել
յայլուստ, բայց թէ զնորին
տեառն բուռն հարցուք զայ-
լուր վարդապետութենէն:
Թերևս ընդ միմեանս բա-
խելով զնոսին զկայծակն ի-
մաստից կարող լիցուք առ մեզ
փայլեցուցանել:

Յորժամ աղօթէր Քրիստոս
առ Հայր վասն առաքելոցն,
և ընդ նոքօք աշխարհի, յա-

ւել և զայս ասել առ Հայրն իւր։
Որպէս զիս առաքեցեր յաշ-
խարհ, և ես զնոսա առաքեցի.
և ՚ի վերայ նոցա ես սուրբ առ-
նեմ զանձն իմ. զի եղիցին
և նոքա սրբեալք ճշմարտու-
թեամբ։ Եւ Պօղոս վասն
իւր ասէր առ երիցունսն
եփեսացւոց. սուրբ եմ ես այ-
սուհետեւ յարենէ ձերմէ. զի
ո՛չ խորշեցայ ՚ի պատմելոյ զօգ-
տակարսն։ Եւ ահաւասիկ
յայտ եղեւ յառաքելոյ տեա-
ռըն սուրբ լինիլ ՚ի վերայ ա-
շակերտաց, և ՚ի տեառնէ
մերմէ ՚ի խնդրուածս ՚ի հօ-
րէ։ Զի սուրբն լինել քրիս-
տոսի ՚ի վերայ աշակերտացն
այն է, զի ուսոյց և վարժ-
եաց զնոսա ամենայն իմաս-
տութեամբ։ Յետ որոյ և
աղօթեաց նոցին. թէ այնու-
հետեւ յանցանէին, անձամբ

զանձինս դատապարտէին ։ Այսպէս և Պօղոս քարոզ առաքեցաւ, թէ չէր զեփեսացիսն ուսուցեալ չէր սուրբ յա[illegible]նէ նոցա. քանզի դէ՛տ էր յոչ զգուշացուցանելն զնոսա. զարիւն նոցա 'ի ձեռաց նորա խնդրէր Աստուած ։ Իսկ հետ զգուշացուցանելոյն սրբեցաւ ։ Այսպէս և տէրն մեր ուսոյց զմեզ առ հայր ասել թէ որպէս քահանային հրամայեցէր միշտ զգուշացուցանել զմեղաւորն 'ի չար ճանապարհէն բանիւն և իմաստութեամբ զոր ունի և սրբել զինքն յարենէ ։ Այսպ՛ս և դու դէ՛տ ես 'ի վերայ մեր, և միշտ տեսանես զարկածս չարին ամենահայեաց աչօքդ զոր սերմանէ 'ի տկար բնութիւնս մեր ։ Գիտես և վասն այնորիկ զքո

պատուհասից որքանու-
թիւն։ Իսկ մեք խաւարեալք
'ի զքաղցուածս մարմնոյ. ո՛չ զի-
մանալեաց թշնամւոյն տեսա-
նեմք զարկածս նետից, և ո՛չ
զքո պատուհասից չափ.
վասն որոյ աղաչեմք սրբեա՛
զքո անուանդ 'ի ժողովրդեան
քում արենէ, միշտ զարթու-
ցանելով զմեզ նախախնամու-
թեամբ քով առ քո փառացդ
սէր, և 'ի պատուհասից երկիւղ։
Իսկ և առ թշնամւոյն գաղտ-
նի նետիցն գիտութիւն, և ընդ-
դէմ պատերազմին տալով զօ-
րութիւն։ Եւ թէ զայսոսիկ ու-
նիցիմք հայցուածով մերով յԱս-
տուծոյ, սուրբ է անուն նորա 'ի
վերայ մեր յարենէ մերմէ 'ի
պատուհասէն. յորժամ վայելող-
քըս 'ինոյն մեղանչեմք։ Որպէս և
Քրիստոս յիւրն յանցուցեալ ա-
շակերտոյն վերայ սրբեցաւ Յու-

դայի ։ Բայց ունելով զսոյն հա-
ւատարիմ խնդրողաց դժուարաւ
պատահի մեղանչելն ․ որպէս ան-
ձամբ զանձն ՚ի հուր արկանել ։
Սուրբ եղիցի անուն քո Հա՛յր
՚ի մեր պարտեացն, զգուշացու-
ցանելով զմեզ և նախախնամե-
լով ։ Եւ տե՛ս զյարակայու-
թիւն խորհրդոյս ։ Զի եղիցի
ասէ․ այսինքն թէ ո՛չ այսօր, կամ
վաղիւն, այլ միշտ և հանապազ ։
Զայս և Որդւոյ սովորութիւն է
առ Հայր ասել․ քո խնամքդ հայ-
րաբար լիցի միշտ ։ Այնուհե-
տեւ թէ սխալիմք, արժանապէս
դատապարտեա՛ ։ Արդ զայս ու-
սոյց տէրն իբրեւ զբանալի
ձգել աղօթիւքս ՚ի վերայ ար-
դարութեանն Աստուծոյ․ և պար-
տական զնա ողորմութեան և
խնամոցն դատել ։ Թէպէտ և
մեք անարժան գտանիմք․ բայց
նա զիւրն առանց խնայելոյ հա-

նապազորդ սփռեսցէ զշնորհս։

Եկեսցէ արքայութիւն քո։ Տէ՛ր ինձ զբարեկարգութիւնս. քանզի յետ ՚ի ներքոյ խնամոցն առանց հրաժարման պահելոյ, և՛ս ՚ի բարձրագոյնն մատչի խնդրուածս. Այսինքն թէ ՚ի վերայ որոց սրբեցեր զանուն քո ուսուցանելովդ, տիրեա՛ և դու հանապազորդ։ Ի՛ նա տէր ՚ի վերայ ամենայնի նախ քան զմեր խնդրելս. ըստ այնմ. տէր թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի։ Բայց աղերսանօք զնոյն խնդրելս ո՛չ է վայրապար։ Այլ զի՞նչ. Աստուած գիտէ զինքն տէր ամենայնի, բայց բազումք ՚ի մարդկանէ տգիտանան զԱստուծոյ տիրելն, կամ զինքեանս տեսանելն։ Վասն այսորիկ կամ ընաւ ոչ անուանեն զանուն նորա, կամ ՚ի գիտելն գործովք ուրանան զնոյն. Ա՛յս ասէ. եկեսցէ

ցէ հոգւոյ իմաստութեան և հանճարոյ յանձն իմ, և ուսուսցէ զիս գիտել զահարկութիւն քոյ թագաւորութեանդ և ղեկրոյդ առ իս զառատութիւն: Ձի եկեսցէ ասէ. այս ինքն յիմ միտս. արքայութիւն քո, գիտել հոգւովդ սրբով զտէրութիւն քո որպէս պարտն է գիտել: Այսինքն՝ որպէս մարմնական աչաց հայեցուածոց առաջի իմանալի հայեցողութեան մտացս ունել նպատակ զիմանալ՚դ թագաւորութիւն: Զայս թէ այսպէս ունիցիմք որպէս հայցեմք, անհնա՛ր է մեզ կամակար մտօք գթել. որպէս ո՛չ է կարելի առաջի թագաւորի և հանդիսական նորա հրապարակի խայտառակ մերկանալ. Բայց և զայս իմացուք 'ի նոյն կարգս. զի վայելչապէս նախ զսուրբ լինել անուանն խնդրեաց.

Քանզի որոգայթիւք բանսարկուն բազում անգամ և յաջակողմն տայ մեզ գթել. այսինքն զմեղսն որպէս զկամս Աստուծոյ կերպարանելով. և այսպէս իբր առ ճշմարտութիւն 'ի նոյն պատրեալ զմարդիկ արկանէ: իսկ մեք եթէ զԱստուած առաջի աչաց ունիցիմք 'ի ներքին մարդս մեր բնակեալ, զօրութեամբ նորա կարողանամք ընտրող որոշմամբ առ մեքենայիցն գիտութիւն: վասն այսորիկ ասէ. Սուրբ եղիցի անուն քո:

Եւ ո՞րպէս՝ ասէ աստուած ցիս՝ լինի սուրբ անուն իմ: Պատասխանեմ: Յորժամ գիտութիւն քո թագաւորութեանդ եկեալ բնակիցէ յիս. եւ մի՛շտ ահարկու արքայութիւնդ առաջի մտացս աչաց մեծի կերպացեալ. ըստ այնմ.

յառաջագոյն տեսանէի ըզտէր առաջի իմ յամենայն ժամ, զի մի՛ սասանեցայց: Ուրեմն ապա զկերպարանս սուրբ լինելոյ անուանն Աստուծոյ՝ զոր յառաջագոյն խնդրեաց· ինքն ուսուցանէ նմին ըստ կարգի բանիցս:

Եւ նախ զայս թէ՝ սուրբ եղիցի անուն քո․ Եկեսցէ արքայութիւն քո: Այսինքն գիտութիւն քո թագաւորութեանդ յանձն իմ. իսկ երկրորդ․ Եղիցի կամք քո որպէս յերկինս եւ յերկրի. Ո՛վ թէ ընդ ո՞ր սքանչացայց երկուց խորհրդոց զհայեցուած միտացս յինքեանս բաժանելով. Այսինքն. վայելչական կարգ բանիս և մեծանձնութիւն առաջիկայ խորհրդոյս: Զի յետ թագաւորելոյն և զկամսն խնդրէ.

Որպէս և 'ի մարդկան մէջն պահի այս սահման ։ Քանզի նախ տիրէ ոք ումեք . և ապա զ կամսն 'ի վերայ նորա 'ի գործ արկանէ ։ Եթէ քաղաք է՝ շինէ . եթէ ծառայ՝ կերակրէ . եթէ աշակերտ՝ ուսուցանէ ։ Այսպէս և սա նախ ընդ արքունական զօրութեամբն Աստուծոյ էարկ զանձն լինել . և ապա որպէս 'ի սեպհական տեառնէ զհոգարկելն զինքն տնօրէնութեամբ կամացն պահանջէ ։ Եւ զայս ո՞րքան ։ Որպէս յերկինս ասէ՝ կամք քո եղիցի և յերկրիս ։ Ո՞վ մարդ՝ և դու ելե՞ր յերկինս, և անդ զանօրէնութիւն կամաց նորա գիտացե՞ր . որ այնպէս ունել զնոյն պահանջես ։ Զի՞նչ են կամք նորա յերկինս . ո՞յք ։ և զօ՞րս կամօքն կառավարէ ։

կամ ո՞րպէս է առ նոսա ա-
նօրէնութիւն կամացն ։ Եւ
ո՛չ գիտեմ ասէ․ բայց որ է-
ջըն յերկնից՝ նա ուսոյց ըզ-
սոյն աղերսել ։ Եւ ո՞րպէս
ուսոյց ։ Քանզի մատեան
աշակերտացն առ տէրն, և ու-
սո՛ մեզ ասէն՝ քո աշակեր-
տացս աղօթել, որպէս Յով-
հաննէս ուսոյց իւրոցն․ իսկ
նա ասաց նոցա որպէս ինքն գի-
տէր՝ աղօթել․ և ո՛չ ընդ ո-
րում խնդրեցին ։ Ջո՛ր օրի-
նակ․ ոմանք 'ի գռեհիկ ոմանց
գոլով 'ի հեռաւոր աշխար-
հէ, անկիրթ հռոմայեցւոց
բարբառոյ ազգի և սովորու-
թեան․ ոչ բնաւ տեսեալ կամ
տեղեկացեալ զարքունական
պալատանն բարեկարգութիւն,
երթան 'ի դուռն թագաւո-
րին զողորմութիւն աղերսել ։
Եւ այպս հասեալ անդր առ․

րակուսին յանձինս իւրեանց՝ ո՛չ գիտելով զօրպիսեան մըտանելոյ առաջի Թագաւորին. և կամ թէ զի՞նչ իւրեանց վայելչական խնդիրք 'ի նմանէ լինիցին։ Եւ մինչ նոքա յայս տարակոյսս իցեն վարանեալ, պատահեցի նոցա որդի Թագաւորին որպէս զմի 'ի հասարակ զինուորաց։ Զոր տեսեալ երագեալ առ նա հասանիցեն ասելով. ո՞վ եղբայր՝ ուսո՛ մեզ, թէ որպէս մտցուք առաջի արքային։ Իսկ նա բարեմիտ գոլով՝ ո՛չ անգոսնեաց կամ այպանեաց զտմարդութիւն նոցա. այլ սիրով ողորմեալ նոցա պատասխանեաց. ես ուսուցանեմ ձեզ։ Յորժամ մտանէք առաջի արքային՝ երկրպագէ՛ք վաղվաղակի և ասացէ՛ք ցնա. տո՛ւր մեզ ըզ-

պատիւ սինկղիտոսացն, որք առաջին են 'ի պալատն քո։ Եւ ո՛չ զսինկղիտոսն անուն գիտեն, եւ ո՛չ զզօրութիւն նորա․ ո՛չ զպալատն՝ եւ ո՛չ զդասակարգութիւն նորին։ Այլ մտեալ առաջի թագաւորին՝ վաղվաղակի զոր ուսանըն բան՝ աղաղակեն։

Իսկ դասակարգութիւնք ամենայն արքունական ապարանիցն նայեցեալ 'ի բարբառնոցա՝ զի օտար է, և 'ի ձեւըն զի շինական է, 'ի դէմսըն՝ զի գռեհիկ է, և 'ի կերպարանս հանդերձիցն՝ զի անպաճոյճ է, սքանչանան յինքեանս՝ թէ ուստի՞ գիտեն սոքա, կամ յումմէ՞ ուսան զանուն սինկղիտոսութեան և զպատիւ՝ այսպէս օտար գոլով ապարանիցս․ Այսպէս և տէրն մեր անհաս

'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ արար զմարմնաւորութեան խորհուրդն, որպէս ասէ Պօղոս ։ Առ որ մատեան աշակերտքն՝ ո՛չ իբրև յԱստուծոյ այլ որպէս 'ի Յովհաննէ ուսանիլ զսահման աղօթից։ Իսկ նա գթացեալ 'ի նոսա ամենագութ սիրով, և ո՛չ որպէս տանէին՝ ուսոյց նոցա աղօթիւքն խնդրել 'ի Հօրէն։

Եղիցի կամք քո որպէս յերկինս և յերկրի ։ Արդ՝ զայս խնդրելով մեր յԱստուծոյ՝ արդարև ո՛չ գիտեմք զզօրութիւն հայցուածոյս. սակայն զերկնայինն զարհուրեցուցանեմք մեծարանութեամբ աղօթիցս ։ Զի որ ո՛չ գիտէաք զպատիւ նոցա՝ տեղեկացեալ Քրիստոսիւ՝ խընդրեմք ունել սեպհականն. Քանզի կամիս տանելով, զամե-

նայն խնդութ՟ շնորհաց ընդ-
թանիւս պարունակեաց ու-
նել հաւասար նոցա ։ Այս
ինքն․ զի կամացն այլայլու-
թիւն՝ արգելու 'ի մէնջ ըղ-
փառս նոցա․ քանզի առ նո-
սա ունի զիւր կամս իբրեւ
առ կամարարս քաղցր և ա-
ռաւօտ․ և առ մեզ իբրեւ առ
յանցաւորս, ըստ պատաս-
խանւոյն․ ո՛րդեակ դու հա-
նապազ ընդ իս ես․ և ամե-
նայն որ ինչ իմ է՝ քո է։
Արդ՝ եղեալ այսպէս կա-
մաց նորա և 'ի վերայ երկ-
րիս, եղեւ մարդկան՝ նորայն
ամենայն ինչ․ որպէս հրեշ-
տակացն ։ Զի՞նչ տացուք
տրիտուր տեառն ո՛վ եղբարք
զայսպիսի փրկական բաժակ
աղօթիցս մեզ արբուցողի։
Զոր գամք հանապազ առա-
ջի Աստուծոյ Հօր, առա-

Չի բազմութեան ժողովոյ
հրեշտակացն 'ի գաւիթս վե-
րինն Երուսաղեմի ։ Զի՞նչ
այլ․ բայց թէ զմանուկն ե-
րեսաց 'ի վերայ երկրի գո-
հութեամբ ։ Այդպարէւ սուտ
տեսանեմք զամենայն կար-
ծիս մտողի զքաղմանցս մարդ-
կան․ յորժամ առ որ խօսիմ
նայեցեալ մտացս աչօք
հաւատամ զԱստուած 'ի վե-
րայ իմ քաղցր, որպէս առ հր-
րեշտակս․ և զիս նոցին նր-
ման խօսակից․ և աղօթս՝
ամենաբարի կամացն ախորժ։
Վա՜յ ինձ, եւ ես թողեալ
զայս՝ յանկայուն կենցաղս
զբաղնում ։ Որ և թէ կա-
յուն էր՝ պարտ էր ըստ բը-
նական սովորութեան ագա-
նել, և զփոքրս ընդ մեծին
փոխանակել ։ Յայտ է թէ
խաբիմ, ո՛չ ունելով զուշ

էմաստիցս առ իս ամփոփեալ։

Ջհաց մեր հանապազորդ՝
տո՛ւր մեզ այսօր։

Ո՛վ մարդ, եթէ որպէս՚ի վե-
րայ հրեշտակացն խնդրեցեր
զկամսն լինել քեզ Աստուծոյ,
անուն հացի վաղվաղակի ընդէ՞ր
սրմին յարմարես. որ ոչ իմանի
՚ի մէջ նոցա։ Քանզի նոքա
իմանալիք են բնութեամբ, և
գիտութեան կերակրոյն միշտ
քաղցեալ փափաքին։ Առ որս
չի՛ք տեսանել սերմանել կամ
հնձել. եւ խոհարարութիւն կամ
մարմնական ճաշակումն. այլ
ուտեն զսէրն Աստուծոյ եւ
յագենան. ըմպեն զհեղումն
բղխման Հոգւոյն սրբոյ եւ
զմայլեալ զուարճանան։ Եւ
ղիմ կարգ աղօթիցս ամբողջ
պահեմ. քանզի հաց՝ ո՛չ ըզ
դիւրածախելին խնդրեմ, այլ
զհանապազորդ կամսն։ Վասն

այսօրինակ խնդրեցի ունել որպէս 'ի վերայ երկնաւորացն . զի և զերկնաւորացն հաց 'ի նմանէ առից այսր կենցաղոյս: Ո՞չ լուար՝ զհաց հրեշտակաց կերեալ մարդիկ . զայն կերակուրըն ունել աղօթեմ, որ հանապազօրդ 'ի յուտելն ո՛չ ծախի, և ըմպելն ո՛չ նուազի . զկերողն յագեցուցանէ, և ինքն յինքնութեանն ամբողջ մնայ: Զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր: Եւ ընդէ՞ր ասէ՝ մեր: Քանզի էր երբեմն և մեր հրեշտակական իմաստիցն կերակուր յանժամ, մինչ 'ի դրախտին փափկութեան զնոյն կթէաք . իմաստնացաւ չարն, և զըրկեաց զմեզ 'ի տէրութենէ կամացն Աստուծոյ, և 'ի հացէն . զբանջար վայրենի պատրաստեալ մեզ կերակուր . այս

է մարմնոյս զգայարանաց ՚: յօտար աշխարհէս հեշտութիւն. Իսկ զհացն Աստուծոյ թերեւս կարացին ոմանք քըն-տամբք երեւաց և բղխմամբ արտասուաց իւրեանց ճաշակել: Արդ՝ այժմ հայր եղեալ մեր Աստուած, դարձեալ և թագաւոր, քաղցր կամօքն ունել զմեր առաջին հացն ազերսեմք ՚ի նմանէ մինչդեռ յայսօր կենցաղոյս պանդխտիմք Եւ հացն զի՞նչ է, բայց և. թէ դիտութիւն և սէր նորին, որով փափաք հոգւոյս կերակրի յայն սեղանն, ուր տէրն զիւր աշակերտսն հրաւիրեաց. ուտիջիք ասէ ՚ի սեղան իմ յարքայութեան իմում. Այլ որոց ՚ի մարմնոյս պարարումն է կամքն մոլորեալ՝ առանց փափագելոյ թուի այս կերակուր և անհաւատալի ՚ի

հանապաղորդ ուտելն՝ ոչ լինիլ ծախելի. զորս զարթուցանել օրինակաւ հարկաւորիմք։ Ո՞չ հաւատաս անծախ լինիլ կերակուր. գիրք սուրբք ո՞չ հանապազ զմեզ կերակրեալ պէսպէս գիտութեամբ՝ 'ի նոյնութեան մնայ։ Դարձեալ և ո՞չ թուի քեզ հեշտ լինիլ գիտութիւն, յուսկիաձոյլ ապարանից, 'ի յուկեթել կերպասուց, յականակապ բազմականաց զի՞նչ օգտի մարմինս։ Ընդէ՞ր հեշտանայ 'ի տեսութիւն նոցին քան ըզ կերակուր առաւել։ Երգք և եղանակք ընդէ՞ր զուարճացուցանեն զսա առաւել քան ըմպելի. Տեսութիւն և յիշատակ եղբարց և որդւոց ո՞չ քաղցրանայ կարօտելոցն որպէս պլինի։ Եւ զի ես 'ի թանձրադոյնն միտեցից, ըզ

պագշոտեան ըմփմամբ՝ զի՞նչ
օգտեցուցանէ համբոյր ողջու-
նին։ Այս ամենայն չէ՛ հաց
կամ գինի, որով մարմնոյս սը-
նանիցի թերութիւն. այլ զհո-
գեկան իղձ քաղցոյն լցուց-
եալ զմայլեցուցանէն զմեզ
գիտութեամբն։ Այսպէս տը-
կար մնաց մերոց առաջի
թանձրացուցաք զյիշատակ սի-
րոյն Աստուծոյ։ Եւ ծանի-
ցուք զի անտեղեակ եմք նը-
մին՝ վասն այնորիկ եւ ո՛չ
ըղձամք։ Ապա թէ տեղե-
կանայք՝ որքան պայծառ
է փառքն Աստուծոյ քան
զոսկւոյն, այնքան ըղձակա-
նութիւն նորին առաւել քան
զնիւթոյն։ Վասն այնորիկ 'ի
նմանէ մաղթէ ունել կնոյն
ասելով՝ զհաց մեր անձախ եւ
հանապազորդ՝ տուր մեզ։
Եւ ընդէ՞ր ասէ այսօր։ Զքո-

վանդակ մարմնոյս կեանս դնէ․ յոր պանդխտելովս՝ բազում ունիմք բնութեամբ եւ արտաքուստ ներհակ հոգեւոր կերակրոյն։ Թէ յայսմանէ արտաքս գնամք՝ անաշխատ 'ի նոյն վայելեմք։ Իսկ ապա մինչդեռ 'ի պանդխտութեանս եմք կեանք՝ քրտամբ արտասուաց, եւ աշխատութեամբ աղօթից հարկաւո՛ր է զնոյն ճաշակել, որպէս եւ հրաման ընկալաք։ Բազումք որք առին զնոյն կերակրոյ զհամեղութիւն աղաղակեն, որպէս այն՝ որ ասէ, քաղցր են 'ի քիմս իմ բանք քո քան զմեղր բերանոյ իմոյ․ Եւ դարձեալ, ցանկալի՛ է նա քան զմեղու խորիսխ։ Եւ Եսայի ասէ․ դիեցէք եւ յագեսջիք․ եւ կշտապինդ վայելիցէք 'ի ստեանց մխիթարութեան նորա։ Զայնէ եւ

իմաստութիւնն, եկայք կերա՛յք 'ի հացէ աստի իմմէ, եւ արբէք զգինիս զոր խառնեցի։ Ուստի զօրանայք առնել զանզգամութիւն եւ կեալ. խնդրել զիմաստութիւն և ապրիլ։ Թող մեզ զպարտիս մեր. որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց։ Տիրապէս խնդրեաց յԱստուծոյ զամենայն ինչ նախակարգեալ համառօտ բանիւք, այսուհետև յառաջ գայ զանձին կրից ըզ խոստովանութիւն սփռել առաջի նորին։

Բայց դու տե՛ս ինձ զամենաբարի ընդարձակութիւն կամաց աղօթիցս ուսուցանողի. զի ոչ նախ զմեղաց թողուլ ուսոյց խնդրել և ապա ընդ Աստուած խօսիլ. որպէս և մարդկան է սովորութիւն. քանզի նախ ներումն խնդրեմք

'ի թագաւորէ , և ապա ըղ-
հայցուածս առ նա բարբա-
ռիմք • իսկ սա ո՛չ այսպէս ,
այլ զհակառակն սորին՝ նախ
զպարգեւսն խնդրեաց , և ա-
պա զներումն • ուսուցանելով
բաւականապէս թէ՝ թէպէտ
և 'ի խորս չարեաց հասանիմք,
երկրորդ են յանցանքն մեր՝
խաղաղութեան և դթութեան
Աստուծոյ՝ զոր ունի 'ի վերայ
մարդկային բնութեանս։ Վասն
այսորիկ նախ զկարեւորն և
զմեծն ունել աղօթեաց , և
ապա յետ զայն ունելոյ՝ դիւ-
րաւ գտցուք 'ի բարերար կա-
մացն մարդկապէս զթելոյն
զներումն։ Թող մեզ ասէ ըղ-
պարտիս մեր։ Արդարեւ պար-
տապան • քանզի յայսքան շը-
նորհս նորա վայելեալք մարմ-
նով և հոգւով՝ զի՞արդ ո՛չ
դտանիմք պարտապան՝ հրա-

ժամնի տեառն կալ հպատակ ։ Ուսուի և 'ի յանցանել զնովաւ վայելչապէս և ուղիղ խոստովանութեամբ պարտական զանձինս դատել՝ զներումն խնդրեմք ասելով. Թո՛յլ արա պարտուցն՝ զոր ընդ սխալեն ամենատես գիտութեամբն ամբարեալ ամփոփես, և Թողուս։ Է՞ր վասն. զի մարմնաւոր եմք. զի դիւրապատիր կամօքս խաբիմք. զի 'ի խաւար կենցաղոյս շրջիմք. զի օրէնս ունիմք բնականս հակառակ օրինաց մտացս, և գերող զիս ակամայ 'ի յօրէնս մեղաց։ Իսկ և Ներելն քեզ վայելչակա՛նէ, որպէս բարերար՝ ողկարի. որպէս ողորմած՝ ողորմելոյ. որպէս գթած՝ կարօտի. որպէս և ես Ներեմ իմում պարտաւորի. Բայց Թերեւս ասիցէ ոք ընդդէմ ա-

սացելոյս. ես հողեղէն մարդ գի՞արդ կարացից նմանիլ Աստուծոյ, և ո՛չ միայն նմանիլ, այլ և զանձն՝ ապացոյց նմին ընծայել յասելս. որպէս ես այլոց՝ և դու ինձ արասցես: Սակայն պա՛րտ է գիտել թէ վարդապետն մեր՝ և օրէնսուսոյց Քրիստոս՝ ո՛չ արտաքոյ բնութեանս զոր ստեղծ՝ կամ սորին հակառակս խրատուզմեզ վարժեալ կրթէր: Ապա թէ է օրէնքս ախորժելի բնութեամբս՝ ամենայն իրօք հարկաւո՛ր է և կատարելն զնոյն: Եւ արդ՝ ո՛ է 'ի մարդկանէ՝ որ ո՛չ զսէրն կամի. ո՛ է որ ընդ թշնամութեանն ո՛չ դժուարի: Են այլ տեսակք մեղաց որ յանցանեն՝ մարմնոյս հեշտութիւն ընձեռեն. որպէս պոռնկութիւն և որկրամոլու-

թիւն. բայց այս ախտ թըշնամութեան՝ ո՛չ բընաւ. զի ՚ի տիրել ՚ի վերայ՝ ՚ի հոգս և ՚ի ծուփս արկանէ զմեզ. ՚ի յերկիւղ և ՚ի տարակուսանըս:

Եւ ընդ է՞ր ո՛չ զիջուցանելովն յանդուցանեմք զանձինս մեր և շահիմք վեղբարանս: Քանզի յամբարտաւանութենէն ըմբռնիմք ո՛չ զիջանելով առ յանցաւորսն սիրով: Իսկ ամբարտաւանութիւնն հակառակ լինի Աստուծոյ, և ո՛չ եթէ ՚ի նմանէ զներումն խնդրէ: Աստի տիրեաց ամենայն անկարգութիւն յաշխարհս, զոր ո՛չ ներէ բանս թուել, ՚ի զպարտսն ունելոյ և ո՛չ թողլոյ: Սա՛ արար զքաղաքս ամրութիւն, զանձաւս բնակութիւն. զզէնս ՚ի սպանութիւն, վասն այ-

սորին ասէ դու թո՛ղ, քան-
զի ես ո՛չ կարեմ թողուլ
զթշնամութիւնդ՝ զոր դու
անձնիշխան կամօք ըմբռնեալ
պահես· Արդ լո՛յծ զամբար-
տաւանութիւնդ՝ որ հակառակ
է Աստուծոյ· և զթշնամու-
թիւն՝ որ ընդ դէմ է բը-
նութեանդ, և թող ընկերին
զպարտսն։ Արա դու զքո
կարելին, որպէս և յԱստու-
ծոյ պահանջես առնել զիւ-
րըն կարելի։ Թող դու եղ-
բօրն, և թողցէ քեզ հայ-
րըն քո երկնաւոր։ Կամացդ
է աշխատութիւնդ 'ի թո-
ղուլն, և ո՛չ եթէ մարմնոյդ։
Իսկ եթէ զայս ո՛չ կամիս,
զի՞արդ զԱստուած յայն ինչ
բռնադատես· զոր դու ո՛չ
եթէ տկարանաս, այլ ո՛չ
կամիս կատարել· Արդ՝ ծա-
նիցուք զերկուսեան 'ի մեր

օգուտն լինել. մեր Թողուլն խաղաղութեան լինի մեզ պատճառ, և անօրէն. և Աստուծոյն՝ զոր վասն մեր Թողլոյն Թողու, անվախճան կենացն կարապետ լինի։ Եթէ 'ի սոցանէ վրիպիմք վասն սընոտի ոխակալութեան՝ անձամբ զանձինս դրժեմք։

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն։

Փորձութիւն աստ զներգործութիւն չարին ասէ, որ հանապազ ընդ մ զ մարտընչի։ Բայց է՞ր ո՛չ ասաց՝ մարտ կամ պատերազմ, այլ փորձութիւն. յայտ արարեալ Թէ ո՛չ ունի իշխանութիւն չարն անձամբ անձին մարտընչիլ ընդ մեզ։ Այլ զի՞նչ 'ի մերոց կամացս և 'ի խորհրդոցս առնու զնիւթ պատերազմին. ըստ որում պատ-

բաստէք զանձինս ձեր 'ի հը-
նազանդութիւն՝ ծառայէք
որում հնազանդիքն. եթէ
մեղաց՝ և եթէ արդարու-
թեան: Եւ Յակոբոս գրէ.
իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ փոր-
ձի յիւրոց ցանկութեանցն
ձգեալ և պատրեալ: Ապա
յայտ է թէ 'ի մէնջ առնու
զնիւթ փորձելոյն: Ո՞րպէս:
Քանզի 'ի ցանկութիւն կե-
րակրոցն պատերազմի. և սեր-
մանէ զորկրամոլութիւն: 'Ի
ցանկութիւն փառացն կցոր-
դի՝ և սերմանէ զնանփառու-
թիւն: Եւ այսպէս յամե-
նայն կիրս՝ մեք զսկիզբն խոր-
հրդոյն բարւոք քննեմք. իսկ
նա ընդ նմին զչարն նիւթէ:
Եւ մինչ չեւ է առեալ 'ի մէնջ՝
զնիւթն՝ մեքենայք նորին
անգործ մնան: Որպէս յայտ է
'ի յաւետարանէն. զի յոր-

ժամ զ կերպարանս քաղցրոյն
եցոյց տէրն՝ ապա մատեա-
ւոր նա փորձիչն ։ Բայց ընդ-
է՞ր ասէ փորձութիւն ․ քան-
զի ցուցեալ մեր զհարկա-
ւորութիւն կարօտութեան՝
գայ նա ըստ այս մասին
շարժեալ փորձէ զմեզ թէ՝
ե՞մք հաստատուն 'ի սէրն
Աստուծոյ թէ ո՛չ, և խառ-
նէ ընդ բնական կրիցն զաւե-
լորդացն զցանկութիւն։ Զոր
օրինակ վէմ ինչ ունելով ա-
ռաջի՝ որչափ հաստատո՛ւն
է՝ անդոյս եմք 'ի շարժմանէ․
իսկ թէ դղրդուի յայսկոյս
յայնկոյս շարժեալ, նայիմք
տեսանել և փորձել, թէ
կարեմք զշարժեալն կործա-
նել ։ Արդ՝ շարժումն 'ի մեզ
է՝ ցանկութիւն կերակրոց,
ցանկութիւն հարկաւոր պի-
տոյից ․ ցանկութիւն փառա-

ցըն Աստուծոյ. Իսկ նա յոր-
ժամ տեսանէ 'ի մի ոք 'ի
տոցանէ շարժեալ՝ գայ փոր-
ձէ. և ընդ բարի խորհուր-
դըն՝ զիւրն խառնէ մեքե-
նայս: Թէ կարեմք ընդդիմու-
թիւն առնել օտարին և ըն-
նականին շնորհօքն Աստուծոյ՝
փրկիմք: Ապա թէ ո՛չ կա-
րեմք, և փորձութեան խոր-
հրդոյն իբր բարւոյ հաւա-
նիմք, 'ի կատարումն գործոյն
կործանէ: Կերակրոցն ցան-
կութեամբ 'ի պոռնկութիւն,
հարկաւոր պիտոյիցն՝ յար-
ծաթսիրութիւն, ցանկութեամբ
փառացն Աստուծոյ 'ի սնա-
փառութիւն: Եւ ահա մեք
'ի մերոց ցանկութեանց խաբ-
եալ պատրեցաք, որպէս գըր-
եաց Յակոբոս՝ ձգեալ զան-
ձինս 'ի խորխորատ մեղացն.
և փորձելովն անփորձ գտաք

'ի մարտ թշնամւոյն. ուստի զգուշացուցեալ հարկաւորապէս զայս ուսոյց Տէրն մեր աղօթել. Մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն. Ո՛չ եթէ իբր աստուածականի. քանզի Աստուած անփորձ է 'ի չարեաց. այլ թէ յոր մեք գնամք խարդաւանութեամբ դաւաճանողին ընդ չարն իբրեւ ընդ բարի, և դու որ տեսանես զկերպարանացն բնութիւն որ չար է, և մեզ բարի թուի՝ և ո՛չ է տիրապէս, մի՛ թողուր զմեզ ակամայ կամօք՝ զանձինս 'ի նոյն կործանել. Զօր օրինակ թէ ոք երկնչի յոմանց՝ թէ ընդ բարւոք կերակուր խառնեալ զմահաբար դեղ արբուցանեն նմին 'ի սպանումն, սաէ ցուք 'ի բժշկաց. դու որ ճանաչես՝ միշտ ընդ իս լի-

Նիցիս. զի մի՛ վասն հար-
կաւոր պիտոյից պատրեալ
սպանցիմ։ Այսպէս և սա
ասէ՝ 'ի հարկաւորութիւն,
զոր կարօտութիւն մարմնոյս
պահանջէ, դու ամենահայ-
եաց՝ մի՛ թողուր զիս փոր-
ձիլ. և արտաքոյ նորին սա-
սանեցուցանիլ։ Ընդ այս կի-
րըս անցանելով Յոբայ՝ գը-
րէր, փորձութիւն են վարք
մարդկան 'ի վերայ երկրի։
Եւ Տէրն ասէ, հա՛րկ է
գալ գայթակղութեան։ Է՞ր
վասն։ Զի զգայթակղեցու-
ցիչն ընթացակից ունիմք յա-
մենայն կեանս։ Բայց ո՛չ ի-
բըր զամենախնամ ակն՝ յոր-
ժամ խնդրեմք 'ի նմանէ ո՛չ
տալ զմեզ 'ի փորձութիւն.
ըստ այնմ. անկցին 'ի կող-
մանէ քումմէ հազարք. բայց
մի՛ երկնչէր, ո՛չ մերձեսցին

առ քեզ· քանզի բիւրք են ընդ այժմ քումմէ ։ Այլ փրկեա զմեզ 'ի չարէն ։ Զփրկութիւնս ասելով 'ի չարէն ո՛չ եթէ սոսկ 'ի փորձութենէ, այլ համանգամայն առեալ յամենայն մեքենայից նորա խնդրէ զերծանիլ ։ Քանզի պատահի բազում անգամ զի ո՛չ ունելով նիւթ զկամս մեր՝ յարուցանէ 'ի վերայ մարդկան· զարկուածս վտանգից· ըստ որում, առ Յոբ է տեսանել, և առվկայեն՝ զորս 'ի ձեռն Թագաւորացն մատնէր, և առ երանելին Հարսն ։ Զի երբ ունէր զկամս Անտօնի նիւթ 'ի չարաչարն զնա հարկանել ներգործէր ։ Եւ աժմ զչարութիւն իւր առ բազումս այսպէս, յոր մատնիմք ընդ ներո[illegible]ան Աստուծոյ ։ Կամ

զի առաքինութիւն սրբոցն նորին յաղթական լիցի. անձանց իւրեանց 'ի փառս, եւ թշնամւոյն յամօթ: կամ զի փորձանօք նոցին զղջացեալ ընդ պատուհասելն Աստուծոյ՝ 'ի չար սովորութենէ 'ի բարին փոխեսցուք. Արդ՝ յայսցանէ ասէ՝ փրկեա՛ ըզ մեզ: Է՞ր վասն: Զի եթէ մեղաւո՛ր եմք՝ դու պատուհասեալ ուղղեա՛ զմեզ, եւ մի՝ 'ի ձեռս թշնամւոյն: Եւ թէ արդարք, որպէս կամիս՝ ընկալ, և մի՝ փորձեր. մի՛ գուցէ ըստ տկար բնութեանս անփորձ գտեալ կորիցո՛ւք: Զի ո՛չ ամենայն ինչ որ ունի՝ անփորձ 'ի բով մտեալ ելանէ, այլ բազում անգամ փորձելովն՝ և յառաջին գունոյն տըժգունի: Զայս գիտելով առաքեալն՝ գրէր առ Կորնթացիսն

Թէ՝ հաւատարիմ է Աստուած՝ որ ո՛չ տայ զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեան և զելսն, զի համբերել մարթասջիք։ Արդ՝ զայս հաւատարմութիւնս պահանջէ յԱստուծոյ ունել՝ 'ի փորձողէն զփրկութիւն մաղթելով։

Փրկեա՛ ասէ՝ 'ի չարէն ըզ մեզ։ Յայտ արարեալ թէ՝ թէպէտ դու զմեր օգուտն տնօրինես փորձանօք՝ և զպըսակն բազմացուցանես 'ի մարտին յաղթութեամբն, այլ իմ տկար, եւ յիւրապատիր մարմնոյ վիճակեալ, ո՛չ անձամբ անձին զնոյն պահանջեմ, այլ միշտ զփրկութիւն ունել աղօթեմ։ Արդարև էառ ըզ փորձ տկար մարդկութեանս ամենայնիւ տէրն մեր ըստ նը-

մանութեան մեր աւանց մեղաց. եղև ճշմարտապէս չարչարակից, զփորձ առեալ փորձանաւորացս. զի այսմ հաւատամք տիրապէս 'ի նախակարգեալ աղօթիցս վշտակցութենէ: Վասն այսորիկ և զօգնականութիւն առեալ 'ի ձեռն հաւատոցն միշտ ճաշակ տկարութեան հոգւոցս շնորհեմք. որպէս գրեալ առաքելոյն. հաւատարիմ է Աստուած ո՛չ տալ զձեզ 'ի փորձութիւն, այսինքըն հաւատալի՛ է թէ չտայ: Ուստի փորձիւ յիւրոցն կրից չարչարանաց: Զի թէ լոյսն 'ի խաւարէն հալածեցաւ, խաւարն զի՞նչ կրեսցէ. իւր ո՛չ եհաս՝ զի լոյս էր, այլ մեզ ծանեաւ թէ հասանէ. քանզի դիւրագայթ եմք: Նա ո՛չ մոլորեցաւ՝ զի Աստուած էր. այլ զմերն իմացաւ մոլորու-

Թիւն, զի մարդիկ եմք։ Եղ-
բարցս նմանեաց՝ զի ողորմած
լինիցի․ և հաւատարիմ է ո-
ղորմութիւնն՝ զի չարչարակից
է։

Փորձեաց՝ զի փորձակից լի-
նիցի․ և կարողապէս օգնեաց՝
զի զփրկիլն մեզ ուսոյց աղօ-
թել։ Փրկութիւն դու ես
Յի՛սուս, և առ ո՛ այլ յենու-
ցումք։ Ո՞չ տալն քո է, եւ
առ ո՛ այլ ապաստանեսցուք։
Ողորմած դու ես, եւ զո՞ւմ
այլ ոտից նմին կարօտեալքս
բուռն հարցուք։ Նայեաց տէր.
՚ի փրկեալքս և ՚ի կործան-
եալքս, ՚ի մատնեալքս եւ ՚ի
չորչարեալքս, ՚ի խոցեալքս
եւ ՚ի գիշատեցեալքս, ՚ի
հաղբեալքս եւ ՚ի յիմարեալ-
քըս։ Փրկի՛չ՝ որ զփրկութիւն
ուսուցեր խնդրել, քոյովս ըղ-
քեզ թախանձեմք, փրկեա՛

զմեզ յորսողէն։

Ձի քո՛ է արքայութիւն
եւ զօրութիւն։ Տէր՝ ասէ, դու
ես ՚ի վերայ մեր, ՚ի ներքոյ
քո թագաւորութեանդ վը-
տանգել։ Բայց տե՛ս թէ որ-
պէս յարմարի ընդ բանս աղօ-
թիցս եւ սորին կատարումն։
Ձի յետ ասելոյն մի՛ տար ՚ի
փորձութիւն. այլ փրկեա՛ ՚ի
չարէն, յաւելու թէ՝ զի քո է
արքայութիւն. այսինքն թէ
փորձէ՝ թէ վտանգէ զոք այն՝
որ իշխանութիւն ունի ՚ի վե-
րայ նորա եւ չարչարէ այն՝որ
զօրութիւն ունի չարչարելոյ,
մեք քոեմք ստացուածք և ա-
րարածք. ՚ի ներքոյ քո տէրու-
թեանդ, և ո՛չ չարին. զօրու-
թիւն ամենայն քո է, և ո՛չ նո-
րա։ Թէ փորձելոյ գտանիմք ար-
ժանի մատնեսցուք ՚ի ձեռս
Տեառն, և մի՛ ձեռս Թըշ-

Նամւոյն։ Զի թէ դաւիթ ըզ-
մարդկան փորձանս թողեալ հը-
րաժարեաց 'ի Նմանէ, եւ ա-
ղաղակեաց, մատնեցայց 'ի ձե-
ռըս Տեառն, եւ մի՛ 'ի ձե-
ռըս մարդկան, մեզ քանիո՜ն
առաւել հրաժարելի է 'ի
մախացող թշնամւոյն անզեղջ
փորձանացն մարտից ։ Քո է
զօրութիւն եւ տէրութիւն 'ի
վերայ մեր. որպէս խնամես
միշտ։ Յորժամ կամիս դու պա-
տուհասես' տէրդ զծառայս ։
Եւ քեզ փառք այժմ եւ յա-
յապայն յաւիտեանս ամէն։

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԷՍԻ

## ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ

## ՊԱՏԱՍԽԱՆԻՔ

## ԽՆԴՐՈՅՆ ՅՈՒՆԱՑ

Գլխագրութիւնք Հռոմայ, զորս պա-
հանջէին առ 'ի մէնջ 'ի պէտս խա-
ղաղութեան։ Ընդ որս եւ լուծ-
մունք առ ընթեր եդեալ *։

## ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔ

1. Նզովեցէ՛ք զասողսն մի բնութիւն զՔրիստոս, զԵւտիքէս, զՍեւերիոս, զԴեւոսկորոս, եւ զՏիմոթէոս ըզ կուզն եւ զամենայն համախոհս նոցին։

*. Այս պահանջմունք եկին 'ի Յունաց 'ի Սուրբ հայրապետն Շնորհալի, բայց վախճանեցաւ նա 'ի նոյն ամին. ՈՒԲ. 1173։ Եւ յաջորդն նորին Գրիգոր Տղայ մականուանեալ յետ երկուց ամաց. այսինքն ՈՒԴ. 1175, ընդ Լամբրոնացւոյն գրեաց զՊատասխանիս։

## ՊԱՏԱՍԽԱՆ

Նզովեմք զԵւտիքէս, զոր և նզովեցին նախ քան զմեզ Սուրբ Հարքն մեր. եւ զՍեւերիոս. իսկ զԴէոսկորոս՝ մինչեւ ցայժմ ո՛չ էր լուեալ Եւտիքեայն համախոհ գոլ։ Մանաւանդ ունիմք զԳերմանոսի երբեմն եղեալ ՚ի Թագաւորական քաղաքդ պատրիարքի, առ Եկեղեցիս Հայոց Թուղթ։ Նա եւ ՚ի բանս իւր զԵւտիքէս միայն, և ո՛չ զայլ ոք յայս աղանդս բամբասէ. եւ մեզ հրամայէ նզովել։ Ապա հարկ է առ այս կարծիս, նախ զմիտս մեր հաստատել ձեզ. այսմիկ բերել զգիրս՝ հերձուածոց Եւտիքէսի, և զգիրս Դէոսկորոսի։

թէ ցուցանէն գրեալքն. ըն-կալեալ 'ի Դէոսկորոսէ զԵւ-տիքէս, եւ կամ գտանի գրու-թիւն նորա՝ համախոհ նորին հերձուածոյ, յայնժամ պատ-շա՛ճ է մեզ, առանց կարծ-եաց նզովել զԵւտիքէս եւ զա-մենայն համախոհս նորին.

## ՊԱՀԱՆՋ.

2. Եւ զի խոստովանիցիք ըզ Տէր մեր Յիսուս Քրիստոս, մի որդի, մի դէմ, մի Քրիստոս մի Տէր, մի անձնաւորութիւն, անորոշ, անփոփոխ, անայլելի, անշփոթ, ո՛չ այլ զՈրդին Աս-տուծոյ, եւ այլ զորդի Սըր-բոյ Աստուածածնին. Ա՛յլ ըզ նոյն Որդի Աստուծոյ. և որ-դի մարդոյ, ընութիւնս եր-կուս. Զմի՛ն խոստովանել Աստ-ւած եւ մարդ, եւ երկուս

բնութիւնս։ Զնոյն եւ զմի Քրիստոս․ ունելով երկուս ներգործութիւնս բնականս, աստուածային եւ մարդկային․ Եւ երկու կամս բնականս, աստուածային եւ մարդկային, ո՛չ հակառակ միմեանց, այլ ընթանայ մարդոյն կամքն՝ զկնի աստուածայնոյն։

## ԳԱՏԱՍ․

Այս խոստովանութեանս համախոհս գտանեմք զամենայն Սուրբս․ եւ զմեծ Հայրապետսն ՚ի բանս իւրեանց․ այսինքն զերանելին Աթանասիոս․ եւ զԳրիգորեանսն, և զորս հանգոյն նոցին։ Նոյնպէս եւ զՍուրբն Կիւրղոս, որ ընդդէմ Նեստորի զինեցաւ յաղթող ախոյեան։ Եւ վասն ստուգելոյ զանճառ եւ զանշր-

փոթ միաւորութիւնն Քրիստոսի, ներհակ չարաչար բաժանողին, ուրեք ուրեք ասաց· մի է բնութիւն բանին մարմնացելոյ· զո՛ր ընկալեալ և հարքըն մեր խոստովանեցան, 'ի նոյն երանելոյն Կիւրղի միտս, և մեզ աւանդեցին, ըստ միաւորութեան բանին ընդ մարմնոյն ասել բացաձայնութեամբ մի բնութիւն բանին մարմնացելոյ, և ո՛չ ըստ պարզ էութեան սահմանի, զի կայս զիա՛րդ կարելի է ասել՝ Աստուած և մարդ զՔրիստոս խոստովանողաց. Արդ թէ պէտ և մեկնեմք զբառդ բացաձայնութեամբ ըստ ուղիղ դաւանութեան, սակայն ո՛չ տիրապէս չինի այսու կամք եղբայրութեան ձերոյ այլ. կարծեօք գայթակղութեան վարիք 'ի վերայ մեր, 'ի յեղումն

և 'ի շփոթումն բնութեանցն Քրիստոսի բաժանելով. զոր մի լիցի զմտաւ ածել. այլ հեռի էին յայս կարծեաց Հարքըն մեր, եւ մեք առաջի Աստուծոյ ։

'Ի վերայ որոյ եւ կարեւոր համարիմք, վասն խաղաղութեան եկեղեցւոյ, եւ շինելոյ զսէրըդ ձեր, եւ բառնալոյ 'ի մէնջ զտարադէպդ գայթակղութեան կարծիս, տեղի տալ ասելոյն բացաձայնութեամբ մի բնութիւն բանին մարմնացելոյ, եւ ասել, երկու բնութիւն, որով ճշմարտապէս գոյութիւն անճառ միութեան բանին եւ մարմնոյն սահմանի։ Եւ զոր օրինակ հաստատեաց զսա Կիւրեղ երանելի, եւ հարքն մեր հետեւողք ընդդէմ բաժանողացն զՔրիստոս. ըստ բնութեանցն եւ յան-

ձնաւորութիւնս. մեք լուծանեմք ընդ դէմ կարծեաց շփոթողացն եւ մնամք անսայթաքելի 'ի ճշմարտութեան, համախոհ հարցն սրբոց դաւանութեան, եւ առ ի ձէնջ գըլխակարգեալ խոստովանութեան որ ընդ նոցին հետեւելի պողոտայ:

Ունիմք եւ առ այս ճըշգրիտ եւ ընդարձակաբան վկայութեամբ հարցն, զթուղթըն ասացեալ հօրդ Գերմանոսի, հաւանական եւ ուղիղ վարդապետութեամբ. Աստի կարողանամք ուսանել, եւ ըզ ներգործութեան եւ զկամաց ձեր դաւանութիւն երկեակ. թէ միոյ Քրիստոսի Աստուծոյ վերայ հաստատի. եւ ո՛չ խորշիմք. այլ ընդունիմք զճշմարտութեան հետեւողս եւ համաձայն եմք խոստովանութեանս:

ՊԱՀԱՆՋ·

Յ· Եւ կամիմք զի ասիցէք զե֊րեք սրբասացութիւնն, բաց 'ի խաչեցարէն վասն մեր· եւ բաց յեւէն։

ՊԱՏԱՍ·

Փոքր եւ չնչին այս կար֊ծիք գայթակղութեան գերա֊կատար ձեր իմաստութեանդ։ Զի եթէ ասէաք առ Քրիս֊տոս, «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ· ողորմեա մեզ»· պարտ էր գայ֊թակղիլ· իբրեւ թէ զշնորհն մարդեղութեան, եւ վասն մեր չարչարանացն զլացեալ ա֊մօթ համարիմք. իսկ ապա թէ պարծանօք, զնոյն դաւանեմք ըստ խրատուն Պօղոսի, «ինձ մի՛ լիցի ասէ յայլ պարծել,

բայց միայն 'ի խաչն տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի„,
ընդէ՞ր ըստգտանիմք յեղ-
բարցդ. Թերևս զի Աստուած
ասեմք խաչեալ և ո՞չ զՔրիս-
տոս. աղաչեմք, և մի՛ առ այս
տկարանայք. զի զխաչն յա-
ւելում բաւական է մարմնոյն
տարացոյց առ 'ի միտս գի-
տութեան, և ճողոպրիլ յԱստ-
ուածաչարչարութեանն կարծ-
եաց։ իսկ զէ՞ն յաւելումք վա-
սն հոլովման բանին. զի սուրբ
բառ, կա՛րճ է 'ի մերս բար-
բառ. և ո՛չ կարէ հոլովել,
և 'ի միւսն յարակցել, որպէս և
ձերդ աչխոանն։ ի վերայ այսո-
րիկ գտանեմք և առ 'ի մէնջ
սրբաբանութեանս Քրիստոսի
զձեզ վկայս։ Զի կա՛յ ցարդ-
եւս յարձանս փորագրեալ
գրով ձեր. 'ի Դամասկոս և 'ի
Տամուեստիայ։ ՄԷ Աստուած,

ՄԷ՛ ես հօր, ՄԷ՛ ես անձանց, որ խաչեցար վ՚ն մեր ողոր"։ Որովք ուսանիմք. թէ և 'ի ձէնջ ուսուք զայս սրբերգէնութիւն այսպէս երգել. և ո՛չ անձամբ անձին է դատել. իսկ թէ ո՞յր աղագաւ անտես արարէք, զառ 'ի հարցն եղեալ աւանդութիւն՝ տգիտանամք։

Եւ յոմանց անպատշաճ լուեալ բարբառ, գայթակղիմք թէ մանուկ յօդ վերացաւ. եւ զծերունեաց աւանդութիւն այլայլեաց. որում ոչ կարեմք հաւանել. զի թէ մեք ասէ Պօղոս. կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ, աւելի քան զոր աւետարանեցաքն. նզովեալ լիցի։ Եւ նա աւետարանեաց 'ի խաչն Քրիստոսի քրիստոնէիցս պարծիլ։ Որում հաւանեալ անյագ տենջանօք, պարծիմք մեք և դուք։

Եւ գիտեմք զի յայնմ բայէ, վասն աստուածաշնչարութեանն կարծեաց հրաժարէք։ Սակայն մէք չեմք այդ Նուրբ տեսութեանցդ, ո՛չ զի Աստուած ասեմք, զնորհ մարմնոյն զւանամք․ որպէս եւ ո՛չ յորժամ զառն բարձող մեղաց աշխարհի, զփառս եւ զէութիւն աստուածութեանն։ Եւ զի կամիմք ՚ի վերայ այսորիկ յօժարամիտ բաղձանօք զսէրդ ձեր ընդ գրկել, բժշկել խաւունս վարկաք և յայսմ մասին․ զկարծիս եղբարցդ․ և ասել զերեքսըրբեանս առ Քրիստոս այսպիսի օրինակաւ։ Սուրբ Աստուած սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ մարմնացար և խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ։ Զի՛ մի թուեսցուք Երրորդութեան յայնմ վայրի տալ

զայն. կամ զՔրիստոս, սոսկ ըստ Աստուածութեան ասել խաչեցեալ, յաւելուած բանիդ ուղղեսցէ զսիրոյդ ձեր կարծիս,

ՊԱՀԱՆՋ.

4. Տօնեսջիք և զտօնս ընդ Հռոմք։ Այս է զԱւետեացն, 'ի ԻԵ մարտի։ Եւ զծնունդն 'ի ԻԵ դեկտեմբերի։ զԹլփատութիւնն 'ի Ա յունվարի։ Եւ զմկրտութիւնն 'ի Զ։ զՏեառն ընդ առաջն երկու փետրուարի Եւ պարզաբար զամենայն։ Տէրունական տօնս, եւ զսրբբուհւոյ Աստուածածնին, ըզ կարապետին եւ զառաքելոցն։

ՊԱՏԱՍ.

Ծանիցէ՛ եղբայրութիւնդ

ձեր. զի զոր ինչ առ ՚ի Քրիստոս ուղիղ դաւանութիւն նախ քան զայս գրուխ, ընկալայք. թէ լինի առ ՚ի սէրդ ձեր հոգեւոր եւ մարմնաւոր հաղորդութիւն. եւ թէ ո՛չ, անըստգիւտ ճշմարիտ եւ առանց ըստերիւրելոյ խոստովանիք. Ո՛չ թէ՝ զի ՚ի թագաորական պատիւ վերանամք, յաւելեալ ՚ի սոյն, եւ ո՛չ թէ ՚ի վերջին աղքատութիւն ժամանեմք պակասեցուցեալ. Նա եւ զառաքելոյն ասել, ո՛չ որկամս, եւ ո՛չ հանդերձեալքն կարեն մեկնել զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի, եւ յառ նա խոստովանութենէս. այլ կցորդեմք ձեզ մի եւ հաւասար, ըստ առ ՚ի Քրիստոս հաւատոյդ, որպէս եւ գրեցաւ. Իսկ զտօնս Տէրունականս, զոր պահանջէք կատարել զամենայն կամօքն Ա-

տուծոյ ունիմք անթերի, եւ
տօնեմք 'ի փառս Քրիստոսի
ըստ ձեզ. բայց 'ի ծննդեանն
օրէ, եւ որ 'ի նա՝ յարին խոր-
հրդածութիւնքն. Աւետեացն
եւ Գալստեանն 'ի տաճարն. 'ի
նախնեացն 'ի մեզ այսպէս եկ-
եալ, զի ընդ մ՛ր տուութեան
լինիցին։ Սոյայն մեր սիրոյ ա-
ղագաւ ժողովեալ եւ զխաղա-
ղութիւնն Քրիստոսի ցանկաց-
եալ հաստատել, խորհեմք և
յայսմ մասին՝ մեծի եկեղեց-
ւոյդ հաւասարել։ Թէպէտ և
չի՛ք 'ի Քրիստոս այսու աղա-
ւելութիւն, կամ նուազութիւն
յաւուրց յաւուրս տօնից փո-
փոխմամբ, այլ միայն հաւատով
և սիրով զնոյնս կատարել։ Է՛
արդարև այս 'ի սորոյն մասանց՝
եղբարց հոմախոհ լինել 'ի
պատիւ նորուն. և կամիմք բաղ-
ձանօք, բայց տկարանամք 'ի

տխրապէս լինելն, յաղագս հը-
նանալոյ աւանդութեանս 'ի
մէջ մեր։

Արդ քանզի հանդերձեալ բանդ ունի և զմեր գլխակարգութիւնս խնդրոց. եթէ զօրացուցէ զձեզ Աստուած առ 'ի կատարել, եւ հաճոյ թուեսցի ընդունել. պարտական եմք և ըստ այսմ մասին զմիմեանց բեռն բառնալով, կատարել զօրէնն Քրիստոսի։ Իսկ եթէ տկարանամք, եւ առ մերս տկարութիւն զ-իջանել աղաչեմք.

ՊԱՀԱՆՋ.

Յ. Եւ զի առնիցէք զՄխունն 'ի պտղոյ ծառոց։

### ՊԱՏԱՍ.

Ըստ աղքատութեան է խափանեալ աւանդութիւնս. և վասն դժուարագիտութեան ՚ի հիւսիսային կողմանս այս նիւթոյ. որ ընդունի զտիպ շընորհաց սուրբ Հոգւոյն։ Արդ եթէ դիւրագիւտ լինիցի, վասն օրինաց, եւ կամ ըստ հեղգութեան ո՛չ խափանեմք։

### ՊԱՀԱՆՋ.

6. Եւ զի առնիցէք զպատուածային հաղորդութիւնն խըմորուն հացիւ եւ գինին ջըրով.

### ՊԱՏԱՍ.

Ըստ այսմ մասին իրաւունս վարկայք ձերում պատուակա-

նութեանդ, ընդ աթոռոյն Պետրոսի հաւատարել եւ ընդ մեր նուաստութիւնս։ Եւ այսպէս զիջանելով զօրէնս սիրոյն նորոգել։ Քանզի նորա առաքելական աւանդոյն աշակերտք հաւասար ձեզ. որոց հանգոյն և մեք, բաղարջ հացիւս նուիրեմք, Քրիստոսի պատարագին։ Արդ՝ տացէ ձեզ Աստուած խոնարհել. եւ այսու 'ի մեր սահման հաւասարել. պարտականեմք, զի՛ մի ինչ կրճիմն լ՛ցի միաւորութեան եկեղեցւոյ. խառնել ընդ անապակ գինին ջուր 'ի փառս Աստուծոյ։ Իսկ եթէ վերջանայք, թոյլ տուք իւրաքանչիւրոցս զիւրն պահել աւանդութիւն առ Քրիստոս հաւատոյն եւ սիրոյն, եւ ընդունելի է սոքօք հանդերձ կատարել։

## ՊԱՀԱՆՋ․

Դ․ Ե․ Զի կացցեն ամենայն քրիստոնեայք, քահանայքն և ժողովրդականքն 'ի ներքս յեկեղեցւոջ, յորժամ կատարի Աստուածային պատարագն․ բաց յայնցանէ, զորս արգելուն կանոնք յաղագս ապաշխարութեան․ նոյնպէս եւ այլ կարգաւորութիւնս եկեղեցւոյ։

## ՊԱՏԱՍ․

Ըստ այսմ մասին յանցանելն, ո՛չ 'ի կամաց եղեւ, այլ յաղագս տարագրելոյ ազգիս, 'ի հայրենի աշխարհէն, եւ եկեղեցեացն․ և պանդուխտ գոլով 'ի մէջ ձեր, ո՛չ հաղորդս ընկալուք սիրով, որպէս իրաւացի էր․ այլ փակեցէք ընդ

դէմ մեր ղիրունս եկեղեցեաց ձեր. եւ մեզ անկար եղեւ 'ի պանդխտութեանս բաւական ժողովրդոցն եկեղեցիս շինել։ Ուստի յառաջեալ աւանդութեանս յաղքատութենէն ուրպ՛ս զօրէնս եղեւ. զի տեսեալ զհայրապետական աթոռս, որ 'ի սորին կողմս վարեալ. վասն ո՛չ ունելոյ եկեղեցի արտաքոյ նորին աղօթել վերին կողման բնակիչքս, ո՛չ բարի նախանձու սովորութիւն կալան արտաքոյ եկեղեցւոյ աղօթել. եւ լինի այսր ապագայ յառաւել ընդդուշութեան կարծեաց թերութիւն բարեկրօնութեան 'ի մէջ մեր։ Արդ՝ եթէ տացէ Աստուած Հայրապետական աթոռոյս եկեղեցի բաւական ժողովրդոցն, դիւրաւ դարձեալ աւանդութիւնս յընդ-

հանուր ազգս տարածեալի, ապացուցիւ մեր եւ հրամանաւ։

## ՊԱՀԱՆՋ.

8. Եւ զի ընդունիցիք զչորրորդ եւ զհինգերորդ եւ զվեցերորդ, եւ զեօթներորդ տիեզերական ժողովսն։

## ՊԱՏԱՍ.

Սահման եւ պատճառ միայն, Դ. ժողովոյն գտանի 'ի մէջ մեր, որ է երիցն, որ նախքան զնա համաձայն. սակս որոյ եւ ընկալեալ եղեւ 'ի մէնջ։ Իսկ յորժամ տայցէք զայլոց պատճառս, համախոհ վերագրրեալ խոստովանութեանդ, եւ երգակից առաջնոց ժողովոց, ընդունիմք սիրով։

## ՊԱՐԱՆՋ·

Գ· Եւ զի ունիցիք ղառաջարկութիւն կաթուղիկոսին, միայն 'ի Թագաւորէ Հոռոմոց։

## ՊԱՏԱՍ·

Այս գլուխ թէպէտ եւ յետոյ դասեցաւ, բայց սակայն պարունակող է ամենայն նախակարգեալ կարգացն գլխոց· վասն զի թէ այս լ՛նիցի, զոր այժմս հաստատեմք զխաղաղութիւն ասէ. և ևս առաւել բարգաւաճեսցի։ Ապա թէ ո՛չ՝ թէպէտ եւ մեք այժմ սերմանեմք. ո՛չ յուսամք առ յապա տալ սերմանեացն պտուղս։ Որում յարացոյց ո՛չ թէ 'ի մարմնականաց, այլ զվերին իմաստութեան առնումք 'ի կիր

զխորհուրդս։ Վասն զի կամեցեալ Աստուծոյ զմարդն որ բաժանեցաւ 'ի նմանէ անձնիշխան կամօքն, վերստին առնուլ, հնար այսմ ա՛ծ 'ի մէջ, զօրէնս եւ զմարգարէսն. ըզպարգեւս, եւ զպատուհասս, որք ո՛չ կարացին ուղղապէս ըզ մարդկութիւնս նուաճել։

Յետոյ այլ խորհուրդ փրկութեան հարկաւորեցաւ յայտնել. այսինքն զբանն համագոյ առաքեաց, եւ ընդ մերս խառնեաց բնութիւն. եւ զնոյն աստուածութեան հաւասարեալ. ընդ նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկ՛ աւորս 'ի վերայ ամենայն իշխանութեան երկնից, եւ զնոյն եդ. գլուխ եկեղեցւոյ եւ զմարմին նորա յերկինս մեզ քահանայ, եւ յերկինս ըղձիցն լցուցանող։ Այսպէս ս. եւ մերս ազնուներ-

գործութեամբ չալին բաժա-
նեցաւ 'ի մէնջ զի թէ ուղիղ
կարծիւք, կամ թիւր։ Մեք
զթշնամութիւն եկեղեցւոյ,
եւ զպառակտումն չար տե-
սանեմք։ Տեսին զայս նախ քան
զմեզ հարքն ձեր եւ մեր,
յիւրաքանչիւր ժամանակս. եւ
հնարեցան առնել զխաղա-
ղութիւն։ Որպէս Գերմանոս
պատուական եւ բարի երջա-
նիկ պատրիարքն. որ գրեաց 'ի
Հայս զթուղթ հոգեւոր սիրով
եւ ուղղափառութեամբ լցեալ։
Եւ Փաւտ՝ դարձեալ 'ի նոյն
աթոռոյ Հայրապետ, յաւել
'ի նոյն խորհուրդ առ մեզ
թուղթ։

Այսպէս եւ մեր հարքն ջա-
նացին. զի Եզր կաթողիկոս
'ի ժամանակս Հերակլի արքա-
յի, արար միութիւն եկե-
ղեցւոյ. սակայն ոչ մնաց հաս-

տատուն։ Եւ Վահան կաթուղիկոս 'ի ժամանակս Վասլի, եւ Կոստանդեայ Թագաւորաց, եւ ո՛չ նորայն ցանկութիւն կարաց ընթանալ 'ի յառաջ։ Եկն եւ Գրիգորիոս վըկայասէրն, առ Ալէքսիոսիւ արքայիւ 'ի մեծ եկեղեցին. և չեղեւ հնար միութեան։ Եւ յետ նոցա զայս որ մեք արժանի գտաք զաստուածագործութեննէս բուռն հարկանել, որ է խաղաղութիւն։ Եւ սակայն երկընչիմք մի՛ դուցէ. զի ո՛չ եմք խառնեալ մարմնով, և հոգեւոր կապակցութիւնս քակտեսցի դարձեալ։ Որպէս 'ի վերոյ գրելոցդ եղեւ, և որպէս օրինացն տկարասցի զօրութիւն, որ ո՛չ կարաց սիրապէս զմարդիկ առ Աստուած մերձեցուցանել։

Արդ՝ քանզի տկարացաւ

պարզ խորհրդոյ հնարք՝ առ՛ այս գործոյ կատարումն, պարտ է ձեզ 'ի վախճան յաւիտենից զբազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ առնել յարգոյց, եւ հանգոյն նմա բնութեանց խառնումն 'ի մէջ մեր առնել. եւ այսպէս անքակ պնդութեամբ զսէրն նուաճել. Այսինքն հորմնացուցանել զաթոռըն Անտիոքայ հայրապետութեանս հայոց. զի 'ի ձեռն ողջախոհ կուսին այնորիկ՝ և անբիծ փեսային այսորիկ միաւորութեան, հաւատամք ըննել 'ի մէջ երկուց ազգացս անքակ սիրով խնամութիւն.

Եւ յուսամք. զի որպէս Տէրն մեր զմարդկային բնութիւնս 'ի ձեռն մարմնոյ իւրոյ նուաճեաց ընդ իշխանութեամբ Աստուծոյ Հօր, այսպէս եւ սա՛՝ մարմին ունե-

լով զաւուրբ աթոռն զայն եւ ե-
կեղեցի, զամենայն եկեղեցիս
հայաստանեայց ընդ իշխանու-
թեամբ Թագաւորին Հռոմոց
ածեալ կացուցանէ։ Զայս ո՛չ
եթէ յիշխանասիրութեանն
ախտէ շարժեալ այսպէս համար-
ձակ խօսիմք առ սէրդ ձեր.
մի՛ լիցի զմտաւ ածել, կամ
այնքան առաջի սրատես ի-
մաստնոցդ շռայլել. այլ
պարզ բարոյիւք եւ անկեղ-
ծաւոր սիրով եւ խաղաղու-
թեան բաղձանօք։ Զի զայս
տեսանեմք հիմն հաստատու-
թեան եւ անշարժ միութեան
մերոյ, եւ առանց քակտելոյ
'ի ներհակացն։

Ապա թէ այս ո՛չ լինիցի,
երկնչիմք 'ի հոգւով խառնելն՝
մարմին եղելոցս, թէ ո՛չ
մնայ հաստատուն առանց կը-
ցորդութեան մարմնոյ. Թուլի

թէ որպէս զօրինակն լիցի, որ ո՛չ կարաց զոք արդարացուցանել, եւ այն զի Աստուած խոնարհեցաւ եւ ետ ։ Իսկ այժմ զի ունիմք քահանայապետ զընութիւնակիցն մեր Քրիստոս, անցեալ ընդ երկինս ՚ի ներքոյ վարագուրին, նստեալ ընդ աջմէ Հօր. ամենեցուն յոյս ՚ի նա հաստատուն է. եւ լուծ պատուիրանին ՚ի նա պատրաստելոյն թեթեւ ։

Արդ՝ այսպէս յօժար լիցի կաթուղիկոսն հայոց մի ՚ի չորից աթոռոցդ՝ ընդ աջմէ թագաւորութեանդ հռոմոց, պատրիարք աթոռոյն անտիոքացւոց, ամենայն հայաստանեայցս յոյս՝ եւ հաւատ՝ եւ մխարանութիւննովաւ առ ձեզ խարըսխի։ Եւ ամենայն լուծ՝ զոր դնէք ՚ի վերայ պարանոցի մեր, այսու յուսով թեթեւանայ, ու-

նելով մինչեւ զմիջնորդ խաղաղութեան հաղորդ ձեր ։ Եւ ձեր կամօք յաջորդն զառաջինըն փոփոխեալ, և թագաւորական ընտրութեամբ կոչեցեալ։ Ապա եթէ ո՛չ, ծառայ՞գոլով այլազգեաց՞ըստ մեղաց մեր, եւ ընդ իշխանութեամբ նոցին բնակեալ, զի՞արդ հնար է ձկտել առ թագաւորդ հըռոմոց, եւ առաջարկութիւն կաթողիկոսի պահանջել ։ Երանի՛ է՝ թէ է՛ր հնար ։ Զի թէ յարտաքնոցն Պօղոս սահմանէ բարի վկայութիւն ունել եպիսկոպոսին, ո՞րչափ ևս առաւել 'ի մեծէ եւ 'ի ծայրագոյն աթոռոյդ ։ Բայց անկա՛ր է այսմ պարզաբար լինել. եւ՞դուք ձեզէն տո՛ւք դէրաւն ։

Ա. Ամենայն մեղուցեալք ըստ իւրաքանչիւր յանցանաց կանոնական հրամանաւ դատեսցին, եւ ճշգրիւք քննեալ, ապա յեկեղեցի Աստուծոյ աստի- ճան ընկալցին:

Բ. Իսկ յանցուցեալքն 'ի նո- ցանէ յայտնի խոտորութեամբ որոշեսցին. եւ յետ ապաշխա- րութեան ապա համակարգի- ցին դասակցեսցին:

Գ. Մալեալն եւ կրճատ- եալն՝ ըստ որում եւ իցէ պատճառի մի՛ կոչեսցի 'ի ժա- ռանգութեան պատիւ:

Դ. Եւ զհաց սուրբ պա- տարագին, զի բաղարջ առնիցէք ըստ ճշմարիտ աւանդութեան հռոմայեցւոց մեծ եկեղեց- ւոյն եւ մեր:

Ե. Բարձցի համենեւին կար-

ծիք, զմնացուած սրբոյ պատա-
րագին ընդ երկրաւ ծածկելոյն։

Զ. Մի՛ եւ նոյն հեշտու-
թեան աղագաւ` եւ ոչ խոր-
հրդոյ, յետ կատարմանն ջերմն
ջուր խառնեսցի։

Է. Կանոնական պահք` մի
՚ի կրօնաւորաց եւ ՚ի քահա-
նայից ձկամբ եւ գինեով
լուծցի։

Ը. Եւ կալցի զաթոռն Ան-
տիոքայ` այժմ կաթուղիկոսն
հայոց, եւ զոր ինչ եկեղեցիք
եւ սահմանք են ընդ իշխա-
նութեամբ նորա յարեւելս եւ
յարեւմուտս։ Եւ յաջորդես-
ցէ հրամանաւ թագաւորին
զնոյն ՚ի Հայաստան սեռ այլ
մինչեւ իսպառ։

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԷՍԻ

# ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅՆ

Պատմութիւն եւ յիշատակ սուրբ եւ հռչակաւոր հայրապետին եւ երջանիկ արքեպիսկոպոսին Ներսէսի Լամբրոնացւոյ։

Սքանչելին Ներսէս եպիսկոպոսն Տարսոնայ քաղաքի էր յաւուրս Լեւոնի հայոց արքայի մեծի· որ առաջին թագաւորեաց յաշխարհին Կիլիկեցւոց յազգէ Ռուբինեանց· և զկնի նորա թագաւորեաց բարեպաշտըն Հեթում եւ այս որդին նորա Լեւոն։ Այս Ներսէս որդի էր մեծ իշխանին Օշնի 'ի Կիլիկիա որ տիրէր Լամբրոնին եւ բազում գաւառաց· եւ ունէր պատիւ սպարապետութեան· եւ եղեւ Ներսէս ուսումնասէր յոյժ 'ի մանկութենէ իւրմէ· եւ էր ազգա-

Հայ․ ուսաւ եւ զյունարէն
գիրս։ Եւ յորժամ ձեռնադ-
րեցաւ արք եպիսկոպոս Տար-
սոնի քաղաքի․ Թարգմանեաց
նա 'ի յունական լեզուէ 'ի
Հայ լեզու զգիրս պատմու-
թեան Գրիգորի Հռոմայ պա-
պուն որ վասն սուրբ հարցն
է․ որք փայլեցին առաքինու-
թեամբ յիտալիայ․ եւ զկա-
նոնականն սուրբ գիրս հօրն բե-
նետիքտոսի՝ որով վարին ամե-
նայն ազգք հռոմայեցւոց․ եւ
զմեկնութիւն Յովհաննու ա-
ւետարանչի․

Արար եւ ինքն մեկնութիւն
սաղմոսացն Դաւթի․ լուսաւոր
եւ առատ մտաւք․ եւ առա-
կացն Սողոմոնի․ մեկնեաց եւ
զքարոզս եկեղեցւոյ․ եւ ըզ-
պատարագամատոյցն գեղե-
ցիկ և իմաստուն բանիւք, Գըր-
եաց և ճառս ներբողականս 'ի

տօնս տիրամօրն Աստուածածնի Մարիամու. և 'ի սուրբ խաչին տօնաւոր չափով, մեկնեաց եւ զաղօթսն Յովհաննու աւետարանչի, որոյ սկիզբն է՝ Էր ընդ Եղբարս Երանելին Յովհաննէս. գրեաց և այլ ճառս իմաստայեղց եւ լի գիտութեամբ:

Կարգաւորեաց յեկեղեցի զառաքելադիր սահմանն. ունել առ եկեղեցւոյն դպիրս, և սարկաւագս, և քահանայս: Եւ զգեստաւորել 'ի խորհրդական ժամուն ըստ իւրաքանչիւր աստիճանի. և եկեալ յիւրում կարգի և սահմանի. զի երեւեսցի իւրաքանչիւր պատիւ և աստիճան. 'ի ձեւ հանդերձիցն. եւ մի՛ լիցի խառն 'ի խուռն որպէս առնէին 'ի տեղիս տեղիս վասն անհոգութեան, Եւ մի՛ տալ զա-

ռաջին աստիճանն ՚ի միում աւուր · այլ պաշտեսցեն ժա-մանանակաւքն զգործսն · եւ ապա յետ վեհագոյնն մատ-չիցին ։

Կարգեաց եւ յամենայն ա-ւուր առնել զտօնսն՝ որում և պատահի, ըստ աւանդութեան սուրբ հարցն · որ ՚ի ծուլու-թենէ և յանգիտութենէ ան-փոյթ լեալ էր · վասն որոյ բամբասեալ լինէր ՚ի տգիտաց ։

Իսկ նա տեսէր զառաքելոյն եթէ տակաւին մարդկան հաճոյ լի-նէի ապա Աստուծոյ ծառայ ո՛չ էի ։ Այլ զի սուրբ հարցն էր աւանդս · ինքն առնէր ան-խափան, և զայլս ՚ի նոյն յոր-դորէր ։ Եւ ինքն խոնարհ, հեզ, անպաճոյճ, ողորմած, աղօ-թական, արտասուեզ, բա-ղում անգամ անյայտ լինէր ՚ի մարդկանէ, և երթայր գը-

տանէին զնա նուաղեալ և ներ-
քեւեալ ՚ի պահոցն և ՚ի քաղ-
ցոյն ։ Այլ զի եպիսկոպոս էր.
և հայր նորա հոգւք եկեղե-
ցւոյն. մնաց նա ՚ի քաղաքն
Տարսոն և եւեթ այր մի արբ-
եալ և անկեալ ՚ի տղմի, և
սկսաւ լալ. և բախեալ
զերեսս իւր ասէ ։ Զի՞նչ
տաց պատասխանի. որ հաւա-
տաց զսա ինձ և ես ոչ խրա-
տեցի զսա ։ Եւ երթեալ յե-
կեղեցին մեծ, ՚ի սուրբ Սով-
փիայ. ՚ի տուէ և ՚ի գիշերի
խրատէ զնոսա Աստուածային
օրինօք և պատուիրանօք կեալ.
ցուցանել ըստ հաւատոյն և
բարի գործս. առանց որոյ ոչ
ոք տեսցէ զտէր. և ըմբըռ-
նեալ զնա ուժգին ցաւոյ.
ապստամբ ՚ի բժշկական ար-
ուեստից. վախճանեցաւ յե-
րիտասարդական հասակի. ա-

մաց երեսուն և երկուց ․ ՚ի
տօնի սրբոյն Բագարատայ Տօ-
ռոմենոյ եպիսկոպոսին ․ և Ար-
գրւրսեհի վկայի ։ և սրբասէ-
րըն Ներսէս փոխեցաւ առ-
սուրբս ։ Եւ տաւնողքն յիշա-
տակի նոցա արժանասցին նո-
ցուն յիշատակի ։ Ամէն ։

Այս պատմութիւն վարուց սրբոյն հանեալ է 'ի ձեռագիր ՈՍԿԵՓՈՐԻԿ մատենէ միոջէ գրելոյ 'ի թուին Հայոց ՉԾԱ (1302)։

## ՑԱՂԱԳՍ ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՑՆ

# Ի ՄԱՏԵՆԱԿԱՆՍ

Երանելոյն Ներսէսի գըրաւոր երկք յոլովք լեալ՝ կարեւորագոյնքն 'ի նոցանէ կանխաւ 'ի լոյս ընծայեալ յածին 'ի ձեռս մատենագըտաց և սիրողաց նախնեացն մերոց երանելեաց. բայց են և յանտպագրեալս ո՛չ նըուազ կարեւորք. յորոց թողեալ զմեծահատորսն. զմեկնութիւն սաղմոսացն Դաւթի և զգրոցն Սողոմոնի, և զայլ ինչ ևս, մեք 'ի ծանր գործոյս բուռն հարաք

## ՑԱՂԱԳՍ ՊԱՐՈՒՆԱԿԵԼՈՑ՝

# Ի ՄՈՒՏՆՆԿԱՆՍ

Երանելոյն Ներսէսի գըրաւոր երկք յոլովք լեալ՝ կարեւորագոյնքն ՚ի նոցանէ կանխաւ ՚ի լոյս ընծայեալ յածին ՚ի ձեռս մատենագիտաց և սիրողաց նախնեացն մերոց երանելեաց. բայց են և յանտպագրելս ո՛չ նըուազ կարեւորք. յորոց թողեալ զմեծահատորսն. զմեկնութիւն սաղմոսացն Պուլթի և զգրոցն Սողոմոնի, և զայլ ինչ ևս, մեք ՚ի ծանր գործոյս բուռն հարաք

'ի տպագրութիւն. յորոց՝ ե-
րեւեալս յայսմ նուագի մա-
տենիկս՝ պարունակէ յինք-
եան զերիս և եթ:

Ի բանից առաջնոյն. Որ
է խօսակցութիւն երանելոյս
ընդ պատրիարքին Յունաց
յաղագս միաբանութեան.
յայտնի երեւի՝ ո՛չ սորա լի-
նել գործ, այլ այլոյ ումե-
մըն ուղեկցելոյ ընդ նմին
'ի կայսերական քաղաքն. և
հարազատութեանն վկայք
են նմանօրինակ բանք սըր-
բոյս յատենաբանութեան 'ի
ժողովն Հռոմկլայու: Օրի-
նակ սորա գտանի և 'ի կար-
գի հաւաքման կանոնաց:

Երկրորդն է մեկնութիւն տեառնուսոյց աղօթիցն ։ Երանելիս և այլ երբէք առիթ կալեալ է մեկնել զայս աղօթս 'ի կարգի մեկնութեան պատարագին . սակայն այս՝ թէպէտ յոճոյ շարադրութեանն վկայեալ նորուն գոլ՝ ամենեւիմբ տարբեր՝ է 'ի նմանէ . և առանձին ընթերցման և մըտախոհութեան հոգեսիրաց և աղօթասիրաց արժանաւոր ։

Երրորդն է պահանջ.ք յունաց 'ի մէնջ 'ի սակի միաբանութեան . և պատշաճաւոր պատասխանիք սոցա . և սորուն տիպք բա-

նկըն յայտնի ցուցանեն թէ նորուն սորայ է, զորոյ օրինակն առեալ 'ի գրանցէ վանից բարձրահայնաց սուրբ Աստուածածնի որ առ Երզնկի դիւղաքաղաքաւ. հածեցաւ տալ մեզ Տ. Խաչակ վարդապետ Ամասիացի:

Ի վերջէ ամենայնի եդաք զվարս սորայ. զոր գտաք 'ի հին ձեռագիր հաւաքածոյս ինչ Ոսկեփորիկ անուանեալ. որպէս 'ի վերջէ վարուցն ծանուցաք:

Են և այլ մասն գործք սորայ. որպիսիք են մեկնութիւն հաւատամքի, և Թարգմանութիւն նամակի

«Կեղոսի միակեցի Տաքսո-բաղդիոս կոչեցելոյ. և այլք ևս. յորոց զոր՝ ի ձեռս մեր հասանէն ոչ գլացուք տալ ՝ի հրատարակումն ։

# ՎՐԻՊԱԿՔ

| երես | տող | սխալ | ուղիղ |
| --- | --- | --- | --- |
| 6 | 19 | անձեաց զբանն | անձեաց բանն |
| 15 | 15 | յղութիւն | յուղղութիւն |
| 20 | 6 | պատասխանի | պատասխանին |
| 21 | 14 | խօսակսիմք | խօսակցիմք |
| " | 21 | ՚ի Հւոգոյն | ՚ի Հոգւոյն |

| | | | |
|---|---|---|---|
| 27 | 21 | վասն այսըրնկ | վասն այսորիկ |
| 28 | 13 | եկմղեցես | եկեղեցիս |
| 29 | 4 | բազմի | բազմիս |
| ” | 9 | զորդ այդ | զոր դայդ |
| 32 | 5 | յամենէ | յարենէ |
| ” | 20 | Հարին | չարին |
| 50 | 1 | բուփմամբ | տուփմամբ |
| 60 | 18 | կոսծանել | կործանել |
| 62 | 19 | խառեալ | խառնեալ |

| երես | տող | սխալ | ուղիղ |
| --- | --- | --- | --- |
| 64 | 21 | ընդ | ըստ |
| 73 | 15 | 'ի Յունաց | 'ի Յունաց |
| 80 | 18 | վանս | վասն |
| 88 | 5 | դժուարագի-տութեան | դժուարագիւ-տութեան |
| 89 | 20 | աւադութիւն | աւանդութիւն |
| 90 | 3 | ամեայն | ամենայն |
| 95 | 2 | 'ի մէնջ | 'ի ձէնջ |

Խօսակցութիւնք ընդ
Պատրիարքին յունաց. 1
Անկնութիւն Հայր Մրի 25
Պատասխանիք. խնդրոցն
յունաց. 71
Վարք սրբոյն Ներսէսի
Լամբրոնացւոյն. 103
Յաղագս պարտաւճանակելոցն
'ի մատենկանս. 113

[illegible]

2013

0015267

2001